



891.99

Ա-81


Ա Տ Տ Պ Ե Տ

Շ Խ Ն Ո Յ

Պ Ա Տ Կ Ե Ր

ՍԱԶԻ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

(ՏԱՃԿԱՀԱՑԵՐԻ)



ՆՈՐ ՆԱԽԻՁԵՒԱՆ.

ՏՊԱՐԱՆ ԵՂԲ. Յ. ԵԼ Ս. ԱՒԱԳԵԱՆՆԵՐԻ.

1898.

8 ПУСТЫ

ЧИТАТЬ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 24 Июля 1898 года.

52859-мк




58111-67 а/

Типографія Братьевъ А. и С. Аваковыхъ, въ Нахичеванѣ на-Дону.

Ե Ւ Ո Յ

— 1 —



պրիլի սկզբներում, դեռ ծիւնը
թանձր շերտերով բռնած էր սա-
րերն ու ձորերը, դեռ քամին փչում
էր ցրտաշնչն սուլումներով սրսը-
փացնում. երկրագործին: Թէեւ ծիծա-
ռներն ու արագիլները վերադարձել էին
հարավից, բայց բների մէջ դեռ չէին տա-
քացել: Թէեւ դաշտերի երեսից անհետա-
ցել էր սպիտակ սաւանը, բայց խրամատներում ծիւ-
նից կազմուած սառոյցները ճգնում էին դիմադրել
արեւի ոչ շատ տաք ճառագայթներին: Արդէն վաղ
սպառել էր գիւղացու անասունների պարէնը եւ նա
քշում էր լզար ու թոյլ անասուններին այս ու այն
կողմը, ծիւնի տակ չորցած, փթած եւ փափկած նա-
խորդ տարուայ խոտի մնացորդներով սովալլուկ ստա-

մոքսներին յագեցում տալու եւ մի կերպ կեանքը հինգ տասն օրով եւս քաշ տալու, մինչեւ նորածիլ բոյսիրի գետնի երեսից քիչ բարձրանալը: Մարդ ու անասուն բոլոր ճիգերով դիմադրել էին վեց եօթն ամիս մահաբեր ծմռան եւ հասնելյուսատու գարնան, բայց այնպէս ուժասպառ էին եղել որ յուսահատեցնում էր նանց պառաւի չորս հինգ օրւայ սառնաշունչ հովերը: Բայց եւ այնպէս կեանքն այնպէս քաղցր էր, այնքան սիրելի ու գրաւիչ, որ կսկծացնելով մկաններն ու ոսկորները, ջղերն ու կաշիները, դիտողին քստմնեցնելով, տքնում էին մի կերպ հիռացնել մահը եւ դիմադրելով նրան մտնելյուսաբեր գարուն:

Գիւղի մէջ՝ Նխնոցում առաւօտ վաղ կեանքն եռում էր: Արդէն գոմերն ու ախոռները դատարկւել արծելու էին տարել անասուններին: Միայն նորածին հորթերին եւ գեալքակներին արեւի ճառագայթների տակ սիփարներում էին տեղաւորել եւ նրանց տէրերը լափով, խաշած թէփով աշխատում էին դրանց կերակրել: Ամեն երկրագործ իւր գութանն ու արօրն էր կարգի բերում եւ երկրագործական գործինքները դուրս հանած պակաս պուատ էին լրացնում, որպէս զի գետինը քիչ ցամքելու պէս դաշտը դուրս գան, վար ու ցանքն սկսին: Պառաւներն էլ իրենց քուղան ու կովկիթը, խաբի չարաշան ու խնոցին, փարչն ու բղուղը, քեաղանն ու տաշտը լւանում, սրբում, մաքրում, արեւի տակ էին դնում, որպէս զի կենսատու արեւը վերջ տայ մեռելութեան եւ կեանք տայ գործելու այդ բոլոր գործիքներին, որոնցով պատրաստւելու էր ռանչպառի ամբողջ տարեկան ապրուսաը եւ սրա ծեռքով աշխարհի ուտեստը:

Վարդեւան աղբարը ուրագն ու սղոցը ծեռքին առաւօտ վաղ դուրս էր եկել եւ արօրի պարագաները դուրս բերելով բաց օդում, միայն երկու կողմից քամուց պաշտպանուած դրան առաջ, արեւի անջերուցիչ ճառագայթների տակ տաշտշում էր սեպեր եւ ուրիշ գործիքներ ու պատրաստում ցանքսի գնալու: Արօրը ամբողջապէս գլուխ էր, մի կողմը կարկատելիս, միւս կողմը քայաքյուում էր: Ներիք չէր Վարդեւանի մտատանջութիւնը իւր փչացած արօրի մասին, կինը՝ Դարանը երկու երեք տաշտ էր բերել որպէս զի կարկատել տայ ջուրը դնէ, որ մի կերպ ամրանայ եւ փուելիք կաթը չը սուզէի: Վարդեւանը վրդովւած շարժում էր գլուխը, ծրմուում էր դիմագծերը եւ ինքն իրեն խօսողի նման գլխով, ուսերով եւ թեւերով անդադար շարժումներ էր կատարում:

—Վարդեւան, ք'ա, ախար թէզ արա, առաջ մէկ այս տաշտերս կարգի դիք, որ տանեմ ջուրը դնեմ, ես գործ ունիմ, պիտի մաջուն շինեմ, որ կոտրած բղուղը ծեփեմ: Դեռ հէլա խոստացել եմ Մելքոնիս, որ չուխան կարկատեմ, գիշերը մալը տանումէ արածելու, ցըտին զնգզնգումէ: Բաղդերիցս անձրեւներն էլ չեն կանգնում, թէ ցերէկը մի երկու ժամ արեւի երեսն ենք տեսնում, թոնը գիշերը մինչեւ լոյս շաղէ գալիս: Մէկ թող արօրդ, այդ շտափօք չէ, երկու գամ զարկ տաշտերիս:

—Զահիլա տարար, գիտես թէ քու տաշտերն են տունը պահելու:

—Տաշտերս էլ իրենց տեղն ունին, կաթդ, մածունդ, իւղդ, պանիրդ կարգի պիտի դրւի. խօ' առանց կերակը չենք կարող ապրիլ: Մենք էլ մեր ոյժի չափ . . .

— Լա՛ւ, գլուխս մի՛ դանկ անիլ, կը շինեմ. . . : Չորս կովդ ու տասներկու ոչխարդ ծմեռս իմ եզների կերածից չորս անգամաւել կերան, դրանց տւած օգուտն ինչ է. . . : Թէ ես եօնջաս ու հէրթս ծախէի եւ դրա գնով պանիր ու իւղ գնէի, բոլ բոլ մեզ օգտելուց ջոկ, մի բան էլ փողից ետ կը քցէի. . . :

— Լա՛ւ լա՛ւ, շատ վրայ մի՛ կախել, եօնջիդ ու հէրթիդ գինը տւել եմ, չորս լիտր ել ծախեցիր, տասներկու լիտր էլ պանիր, էլ ի՞նչ պիտի լինի:

— Ծախեցիր, . . . Ծախեցի չէ՞ , փողերն էլ գրա պանս, քսակս դրի ու պահեցի. . . .

— Ինձ ի՞նչ թէ՛ ինչ արիր, ես որ քեզ տւի, ես որ քեզ յանձնեցի, տնտեսեցի իմ աշխատութիւնով դեռ տնեցւոց բոլորիդ գուլպացուն, չուխացուն այդ ոչխարի բրդից ելաւ, երկու ջէջիմ գործեցի եւ դեռ աղջկանդ բաժինքի անկողնի բուրդը մատակարարեցի, էլ ի՞նչ պիտի լինի:

— Եղը Մեղրենց ուղարկեցի մեր պարտքի տրկոս շահի տեղ, իսկ պանիրը, այն էլանքաշ պանիրը զափթիէի բին-բաշին կերաւ միւդէիի (պրօկուրօր) հետ կարծես թէ մենք ստեղծւել ենք մի միայն այդ քաղքւոց ստրկի պէս ծառաելու համար: Արգերում չեղաւ այս քաղաքը, արզուլում (այր-արեւիչ) մեզ համար: Էս քաղքիների ճանկում մինչեւ ե՞րբ պիտի մենք տապկւինք. . . .

— Բարո՛վ, Վարդեւան աղբար, ասաց ու ծիից վար իջաւ մի ճանապարհորդ, որն ինչպէս երեւում էր, քաղաքից էր գալիս:

Վարդեւանը նրան նկատելու պէս, սիրտը տակն ու վրայ եղաւ, մորմոքաց, բայց կըքերը զսպելով կան.

չեց իւր որդուն, որը գոմի թլած պատն էր՝ կարկատում:

—Մելքոն, Մելքոն, շտապի՛ր, Կարապետ աղափի ծին ներս քաշէ. . .

Մինչ այդ Գարանը հիւրի ծիռւ սանձն առած կանգնել էր դրանը եւ սպասում ամուսնի կարգադրութեան: Երբ լսեց Մելքոնին եղած հրամանը, առանց սպասելու ծին ներս քաշեց: Մելքոնն էլ նրա ետեւից նկաւ եւ Վարդեւանը ուրագը վար դնելով, ձեռքերով նշան տալով ասաց:

—Աղա ջան, հրամմեցէք, ներս հրամմեցէք եւ բոլորը ներս քաշւեցան հիւրասենեակ: Սենեակը բաւական լնդարձակ էր, թէեւ առաստաղը շատ բարձր էր եւ լոյսը նւազ, բայց մաքրութեամբ կարող էր օրինակելի լինել քաղաքացի արհեստաւորների տնեցին: Փռւածքը, բարձերը եւ սարքը թէեւ չթից էին, բայց իրենց նուրբ գոյները պահւած եւ մաքրութեամբ ծփծփում էին: Երեւում էր, որ տան տէրը թէեւ աղքատ, բայց սաստիկ մաքրասէր եւ հիւրասէր էր: Տանտիկինը բաւական չը համարելով իւր տնական սովորական կահաւորութիւնը պատւաւոր հիւրին, անմիջապէս ծալքի լայն փեղկը բացեց եւ մի մաքուր երեսով թանձր մինդար իջեցրեց հիւրի տակը փռելու:

Կարապետ աղան խսկոյն աւելորդ շորերը հանեց եւ լւացւելու ջուր ուզեց: Մարգարիտը՝ Վարդեւան աղբօր աղջիկը լւացարանը, զըկիչը եւ մաքուր սպիտակ սրբիչը ուսերին մօտեցաւ Կարապետ աղաին, լւացւելու ջուր տալու: Հասած էր Մարգարիտը կարմրած խնճորի նման, սպիտակ ձեռքերն ու մորթը էր կարելի զանազանել հագնւած սպիտակագոյն չիթ

Քարիայից: Բազմահիւս մազերը, որ շարքով սփռւած էր թիկունքի վրայ, փայլում էին սեւ սաթի նման: Խոշոր աչքերը ցոլում էին եւ բոցեր արձակում շուրջը, իսկ այտերը մայիսի վարդից Ե՛Լ վարդագոյն եւ Ե՛Լ հրապուրիչ: Կարապետ աղան աչքերը չռած գայլի նման անմեղ օրիորդի դէմքին, լւացում եւ բորբոքում էր, երբեմն երբեմն ԷԼ հառաջում:

Գար անը տուն էր գնացել, որ իաւ մորթէ ու տապակէ, իսկ Մելքոնը ծիուն իրենց եօնչափ մնացորդ կապոցը տալուց յիտոյ եկել Է՛Ռ հիւրասենեակ եւ դրան մօտ կանգնաց սպասում էր հօրը նոր հրամանին: Վարդեւանը հեռուն նստած դիտում էր, թէ ինչ պէ՛ս տատանւելով եւ կրկնակի սապոնւելով էր լւացւում վաշխառու աղան, հայեացքով կուլ տալ ցանկանալով նրա հրեշտակատիպ աղջկան:

Երբ լւացւեցաւ աղան, Մարգարիտը արիւն քըրտինք մտած նրա դաժան հայեացքի եւ կիզիչ շնչւածքի ազդեցութեան տակ տւեց երեսըփիչն հեռացաւ բակում երեսի քրտինքը եւ սրտի բաբախումները դադարեցնելու տենչով, որտեղից դարձեալ պարտաւորւեցաւ կրկնակի ներս մտնել, աղափ ինչ ինչ ծառայութիւնները կատարելու համար: Բայց եւ այնպէս այս բոլորը պարտաւորւած էր տանել ու տոկալ Վարդեւան աղբարը, քանի որ աղափն պարտք ունէր եւ պարտքի, մուրիակի վճարման ժամանակն ԷԼ անցել էր:

Դեռ այդ հերիք չէ, Գարանը իր վերջին վարեկն ել մորթեց, պուտկի որքում մնացած իւղով տապակեց եւ շտապեց հիւրասիրել աղաին: Կարապետ աղան այդ նախաճաշը վերջացնելուց յետոյ, վրան մի պնակ մածուն, մի անքաշ պանիր եւ մի քանի խաշած ձու եւս վայելելով սեղանից ետ քաշւեցաւ, կըր-

կին լւացւելու ջուր պահանջելով։ Ի՞նչ պիտի անէք Մարգարիտը, իոգին դուրս գար, պարտաւոր էր ծառայել Աստծու հիւրին, մանաւանդ որ այդ հիւրը իրենց աղան էր, նրան մեծաքանակ պարտք ունէին եւ դեռ աւելին՝ վախենում էին, որ նա գանկատ տայ եւ կրակ գցէ Վարդեւանի տունը։ Պարտքը, մուրիակով պարտքը սոսկալի բան էր, իսկ տոկոսիքը ու՛ի, մկից, խոզից աւելի կատաղութեամբ էին անում. . . : Երբ փորը կշտացուց ու թէկն տւեց Կարապետ աղան, գլուխը բարձին կըթնելով, սիգարէթը ծխելով ասաց։

—Գիտե՞ս, ինչի եմ եկել, Վարդեւան աղբար, դու մեզի չես փնտրում, չես երեւում, ես եկայ. . .

—Ի՞նչ, ձմեռը, բուքն ու բորանը երբ իեռացաւ. որ մենք կարողանայինք քաղաք գալ, գործ անել, . .

—Ես չգիտեմ, մենակ դու խոստացար, որ գոմէշներդ կը բերես Զատկից յետոյ կը ծախես ու մեր հաշիւները. . .

—Այո՛, ես էլ էի մտածում, ես էլ վժուել էի, բայց գոմէշներ Աստուած առաւ ձեռքիցս. . .

—Ինչպէ՞ս թէ.

—Երկուսն էլ ստակեցան . . . Զմեռս մեր մալի կերը շատ նւազ էր, ցուրտն էլ դեռ այսօր շարունակում է. . : Աստուած Ե՞րբ է խեղճի երեսին աշել, որ մեզ աշէ՛: Ես որոշել էի, մտադրել էի պարտքից ազաւիլ, բայց Աստուած որ չը կամենայ, ես ի՞նչ կարող եմ անել. . . :

Այդ չեղաւ, մեր հաշիւր ետ գցել չի լինիւ. . . դու խօ՞ ճանաչում ես մեծ եղբօրս՝ Գէորգ աղաին, նա չի համբերիլ, մէկ էլ տեսար մէմուրն եկաւ տունդ, դուռդ գըելու: Գործիդ աշէ, գնա քաղաք իրեն տես, կարգի բեր հաշիւդ, թէ ո՛չ, դու գիտես, յետոյ կը զղչաս:

զամու զառյա շին վարդականար ուրաց արք քառա մէջ
առև զի պահապատ գուր պարաբ մէ րան պարապարան անոնք
ըստը պահե լին ցը ըմառածոն ճիշտն առեամ ըմառ
քի ու մէջի այսու ըազու ըամառած ու ըաքը ու նորա
ու պատ առավար ամ ու մէջ նախանձնի մէջմա
խթանի ու գուրանը ու քառ զին ու ըար ժիր ըազ
ու մատ առ զու քառու գու զի ան քառ ասաւու զիրը

Ա : Նախանձնու ու Ա Առեամառան զիւաս ուրու

Արդեւանը հնար չ'ունէր, Գէորգ աղափ հրաւէ-
րը լսելու եւ Արզրում գնալու: Ցանքի գործի ժամա-
նակ էր, այդ օրերի աշխատութեան արդիւնքովպի-
տի կերակրէր իւր ընտանիքը, պիտի պարտքերը, հար-
կերը տար եւ կարգի բերէր տնտեսութիւնը: Դժւար
էր, անտանելի մշակի դրութիւնը, փուփ' կանխիկ դը-
րամի պակասութիւնը սպաննում թողինում էր: Դեռ
լաւ էր, որ Վարդեւանի մեծ որդին՝ Գեղեւոնը Ղար-
սում հիւսնութիւն էր անում եւ տարեկան եօթը ու-
թը ուսկի էր ճամբում ծնողներին, որով վճարում էին
պետական հարկերը, ապա թէ ոչ սովամահ կը կուօր-
ւէր Վարդեւանի ընտանիքը եւ հարկա հանը վաղուց
կը ծախեր նրա անասուններն, արտերն ու տունը, ի-
րեն էլ երկար ժամանակ բանտերի խորշերում փտեց-
նելով:

Սոսկայի էր Վարդեւանի վիճակը. ճշմարիտ է,
որ նա բանտում չէր. սոված ու մերկ էլ չէր, ընտա-
նիքն էլ ուրիշների դռները մուրալու աստիճանին չէր
իասել, բայց առանց հառաջելու, առանց մորմոքալու
ո՛չ հաց կարողանում էր ուտել եւ ո՛չ քնել անվրդով
ու հանգստացնել տանջւած մարմինը: Ամբողջ տարին
ցանում էր, գութնում էր, քաղում էր, կալսում, վա-

զում էր, ձգւում, բայց եւ այնպէս էլի կիսակուշտ, էլի կիսամերկ, էլի կարիքի մէջ խեղդւած, էլի պարապատէրերի ճանկում: Գեղեւոնը նշանւած էր: Երեք տարի էր, սպասում էին խնամիները, որ կը գնայ Վարդեւանը հարսին տանելու, բայց տարոց տարի, հարսանիքը ետ էր ընկնում, մինչեւ իսկ Գեղեւոնը չէր կարողանում Ղարսից վերադառնալ: Աշխատանքը այնչափ քիչ էր, որ հարկերը ծածկելու հազիւ էր բաւում, ել ի՞նչպէս գար Կարսից Արզլում, ծախսեր անէր, հարսին նւէր տար եւ կամ հարսնիք բռնէր:

Գալարւում էին հօրն ու մօր սրտերը, երբ մտածւով էին, որ չեն կարողանում հարսը տուն բերել: Ծնողական սիրուց աւելի տանջում էր ամօթը, այն միտքը, թէ դուռ դրացի ծիծաղում է նրանց վրա, որ չեն կարողանում հարսը իրենց շէմքից ներս գցել: Ամեն տարի յոյս էին դնում իրենց բերքի վրա, կալի վրա, բայց կալի մէջ այնպէս էր ցրւում, այնպիսի աւարի էր մատնւում նրանց յոյսը: որ մնում էին շւարած ու ապշած:

Յանքսերը շարունակում էին: Վարդեւանը Մելքոնի հետ իրենց երկու լուծ արջառներով չէին կարողանում արտից ու հանդից դուրս գալ: Անձրեւն էլ կարծես թշնամի էր ընկել չարատանջ երկրագործին, բարակ մաղում էր, թռչում գետինը եւ ուժասպառում լղարած արջառներին ու տէրերին: Գանդաղ էր ընթանում նրանց գործը, մինչեւ ապրիլի քսանը, տասըն ու հինգ օրւայ մէջ հինգ օր՝ ափար տեղ (հաւասար մօտաւորապէս հինգ դեսետինի) հազիւ էին ցանել եւ տափնել: Ունէին մի երկու օրաւար տեղ եւս, բայց յուսահատւել էին, չէին իմանում ցանել, թէ թողնել::

Բայց ե՞րբ կարող է երկրագործը ձեռք քաշել հողից, մի օրավարը յաջող տարում տասն եւ հինգ սոմար (30 չտվերկ) ցորեն կարող էր տալ, իսկ այդ բերքի գնով ոչ միայն պարտքերը, հարկերը, այլ մինչեւ անգամ նոր լծկանների կարող էին վճարել..,: Բայց ռանչպարի յոյսը, լոկ երազէր մնումյանախ եւ համարեայ երկար տարիներումնա իւր ցանածի կրկնապատիկն, եռապատիկն էր հաւաքել, որով հազիւ իւր անասունների կերն էր դուքս եկել եւ իր ընտանիքի սովամահ չը լինելու չափ պարէնը, իսկ յաջորդ տարւայ ցանքսի սերմացուն միշտ կիսատ էր մնացել:

Այդ բոլորը Աստծու պատիժն էին համարում, քանի որ ժամանակին անձրեւից, կարկտից, չորութիւնից նեղւում էին ցանքսերն եւ կամ մորեխը, մանաւանդ մուկը կտրատում ու փչացնում էին ռանչպառի դառն աշխատութեան պատուղը: Բայց փորձւած ծերուկները միշտ կրկնում էին,— Աղբա՛ր, առաջ էլ կային մորեխս, մուկ, առաջ էլ պատահում էին ամեն տեսակ փորձանքներ, բայց մենք մէկին տասը, գոնէութը անպատճառ ժողովում էինք, դեռ չես ասումյաջող. բերրի տարիների մէկին տասներկուսն ու տասնը հինգը, որին շատ ու շատ անգամ դիմաւորել ենք: Այս Աստծու պատիժ չէ՛, Աստւած իւր ստեղծածին տառապանքի մէջ ի՞նչի պիտի թողնէ, այս մեր խելքի պատիժն է, մեր անփորձութեան հետեւանքն է: Տասը-քսան տարի շարունակ ցանում ենք ու ցանում, առանց մտածելու, որ երկիրը պառաւել է, թուլացել է, պէտք էնթան պարարտացնել, որ մենք էլ բերք ունենանք: Տեսէ՛ք, լաւ տեսէք գութնվար արտերը, խոպանից ետեւ ցանւած հողերը, կամ աղբով պարա-

տացրած հանդերս, բոլորն էլ կարգին քերք են տալիս: Եթէ մենք երկար խոպան Թողնենք, կամ աղբենք, ինչի՞ պիտի առաջւայ նման քերք չստանանք: Պավերի ժամանակ հողը պարարտ էր, ուժեղ էր եւ միշտ չորրոդ տարին արտը խոպան էին Թողնում, իսկ մենք, հողերս այնքան քչացել է, որ ոչ միայն խոպան չենք Թողնում, այլ մինչեւ անգամ չենք աշխատում աղբով պարարտացնել եւ մէջ ընդ մէջ կտաւատ ոսպ եւ ուրիշ հատիկներ ցանել, որ հողը գիրանայ: Ամեն տարի ցորեն, գարի որ ցանենք, բերքն էլ նրա համեմատ կը քաղենք:

Վարդեւանը ցանում էր եւ մտածում, մտամոլրւում: Ցոյսը անչափ մեծ էր սրտում եւ վստահաբար վարում էր գործը, վարում եւ երբեմն էլ վարայում, Թուլանում դառն մաքերի մէջ խորապուզում: Հապա եթէյոյսը չի՞րականանար, կարկուտը, կամ մուկը նորից փշրէին նրա յոյսերը...: Այո՛, ասում էր նա իւր մտքում, հողս շատ է հալից ընկել, պարարտութեան կարօտ է, բայց ինչո՞վ պարարտացնել...: Աղը իրեն կարեւոր է, աղբով էլ շատ դժւար էր ութ-տասըն օրաւար հողը պարարտացնել, մանաւանդ որ աղբըն էլ տնտեսութեան մէջ իւր որոշ գերն էր կատարում, իւր տան վառելիք աթարն էր Թխում, որից մի մասն էլ ծախում էր քաղաքացուն, ինչ ինչ պէտքերը հոգում...: Արտը պարարտացնելով կարող էր աւելի վաստակել եւ տան վառելիքը գնել, բայց եւ այնպէս հակառակ պարագան էլ կար. կարող էր մուկը ամենալաւ արտն էլ ոչնչացնել, հետեւաբար նա ձմեռը առանց վառելիքի կը մնար...: Իր անասունների աղբով նա չէր կարող ամբողջ իւր հողերը պարա-

տացնել, բայց եթէ մէկը երկուսը պարարտացնել, էլի մեծ օգնութիւն էր, միայն թէ տատանւում էր... Կասկածում էր: Պապերը այդ բանը չէին արել, դրացիները չէին անում, ինքը աշխարհի առաջ ինչպէս մինակ օրինակ դառնար եւ անյաջող դէպքում բացի զրկանքից եւ ծաղրի մատնւէր:

Եղանակը ամպամած էր եւ արջառները հալից քնկել, թուլացել, արօրը չէին կարողանում քաշել: Դիտում էր մտամոլոր Վարդեւանը, թէ ինչպէս տաժանելի տանջանքներով էին շարժւում, փոփոխում քայլերը ուժասպառ անասունները եւ ինքն էլնրանց հետ հալւում էր ու տանջւում, առանց կարողանալու վշտի առաջացրած թմրութիւնից սթափւել: Մելքոնը երբեն երբեմն հառաջելով կրկնում էր — Հօ՛, օհօ՛, հօ՛, եւ ճիպոտը օդի մէջ շարժելով փախացնում էր արջառներին եւ առաջ մղում: Սա տեսնելով որ հայրը սաստիկ մտատանջւում է եւ մոռացելէ անասուններին, ասաց.

— Ափա՛ր, արջառները չարձակե՞նք, անասունները կարողութիրնից ընկան:

— Արձակենք, արձակենք, ասաց Վարդեւանը եւ շուր տւեց արօրը:

Արջառները քշեցին արտմէջը արածելու, իրենք էլ հայր ու որդի իրար դէմ նստան. որ հաց ուտեն: Բայց հացերը պարպել էր, Գարանն էլ հաց չէր ուղարկել, ուշացել էր:

— Մելքոն, տոպրակի մէջ ո՛չ հաց կայ, ո՛չ էլ մածուն: Գարանն էլ չեկաւ:

— Ե՞ի, ով պիտի հիմի տուն երթայ ու հաց բերէ, ես սաստիկ դադրել եմ: Քիչ նստենք, ոհիմի ուր

որ է, կ'երեւնայ: Գարանս կամ Մարգարիտը հացերս
կը բերեն:

Հենց այդ միջոցին երեւցան հեռուն՝ խրամատի
մօտ Մարգարիտը եւ Վարդեւանի դքացու Մանուկի
աղջիկը, որոնք իրար հետ կապոցներով հաց էին բե-
րում: Երկուսի միասին երեւալը նոր մտքեր ծագե-
ցրեց Վարդեւանի սրտում, մանաւանդ որ հանդարտ
քայլերով եւ իրար հետ շարժումներով խօսակցում
էին երկու թշւառ արարածները: Անպայման նրանց
խօսակցութեան նիւթը իրենց սրտերին շատ հաճելի
առարկայի մասին էր եւ հոգով վրդովւած էին եր-
կուսն էլ, որ մինչեւ անգամ արկնարկները չէին ու-
ռոզում հեռուն, շրջապատները ծգել ու դիտել: Վար-
դեւանի աչքը պղլած մնաց նրանց վրայ, մինչեւ ե-
կան, արտը մտան:

—Աղջիկ, ի՞նչի՝ այսքան ուշացար, մեզ քաղցած
թողիր, ասաց Վարդեւանը ուրախ դէմքով, դուսարից
մի աներկիւղ պատասխան ստանալու մտքով.

—Գարանս ուշացուց: Մէկ էլ, որ Մարգանը ա-
սաց— սպասիր, միասին գնանք: Ես էլ վախենում էի
մինակ գալու, քիչ կեցայ ու մէկտեղ եկանք:

—Վախենալու ի՞նչ կայ, ճւաս ձայնդ գիւղ կը
հասնի, հանդւրները կ'իմանան, էլ ի՞նչի՝ ես վա-
խենում. . . :

—Մարթան էլ շատ ճւաց, ճթաց, բայց մինչեւ
գիւղացւոց հաւարի հասնելը, Մահմէդը խեղճ աղջկան
լեղանաք արաւ:

Վարդեւանը չը կարողացաւ պատասխանել, նա
իսկոյն կապոցն առաւ աղջկայ ձեռքից ու բաց անե-
լով նշխարքի նման բարակ ու սպիտակ հացից բերա-

Նը գցեց: Մելքոնը մօտեցաւ եւ մի պատառ հացով
մածնի պուտկի երեսից սերը քաշեց եւ կուլ տւեց:
Մարջանը հանդի մէջ կանգնած սպասում էր, որ
Մարգարիտը նրան ընկերակցի մինչեւ իրենց արտը:
Մարգարիտը նրա սպասողական հայեացքը զննելուց
յետոյ սիրտ արաւ եւ ասաց դողդղալով.

—Ափա'ր, Մարջանի հետ գնամ նրանց արտը,
մինակ վախենում է. . . :

—Դնա աղջիկս, գնա. շուտ էլ դարձի'ք, մի' մը-
նաք: Մի' վախենաք, գնացէ'ք աչքս ծեր ետեւից է:

Երկու ընկերակիցներն արագ քայլերով հեռա-
ցան: Վարդեանը նրանց ետեւից դիտելով մնաց նըս-
տած տեղը արձանի նման եւ սրտի խորքերից մի դա-
ռն հառաչանք արձակեց: Ամպերը հետզիետէ կու-
տակւեցան, մռայլեցին թախծալի դէմքը Վարդեւանի,
անձրեւի բարակ կաթիլների հետ խոնաւութիւնը Թա-
փանձեց ռանչպարի մարմնի, ոսկորների ծուծը եւ
նրա վշտացած սիրտը կսկծացընց ու մղկտացընց: Նա
երբ իւր լղար արջառներով կրկին փորձեց ցանքը ա-
ռաջ տանիլ ու վերջացնել գործը, արօրի կապերը
քայքայւեցան ու ցրւեցան եւ Վարդեւանը շւարած
մնաց անձրեւի դակ, առանց մի կտոր թաղիքի, կամ
կարպետի ծածկոցի:



III

Փիշեր էր անցել: Վարդեւանը արօրը հազիւ
մի քիչ կարգի էր բերել եւ Մելքոնին հանդի մէջ լըծ-
կանների քով թողած, եկել էր տուն հանգստանալու:
Փոշենման թոնը սփռւումէր եւ դաշտերը ամեն կողմ

Թուշել, խխմել, այնպէս էր կակղել, որ ման գալի անհնար էր դարձել, մարդիկ քայլելիս մինչեւ Ճնկները խրւում էին ցեխի մէջ: Այնպէս թանձր ամպերով էր պատել երկինքը, որ ոչ միայն ոչ մի աստղչէր նկատւում, այլ խաւարը կատարելապէս տիրապտել էր, որ դաշտում ոչինչչէր տեսնւում: Նինոցը անյայտացել էր մառախուղի մէջ եւ բացի շների երբեմնակի տիսուր ունոցից, ոչ մի շուրջ չեր լսում: Աղջամուղջը կարող էր կատարելապէս յուսահատեցնել, եթէ մարդիկ զարթուն եւ սթափման վիճակի մէջ նրանում գտնւէին. բայց քունի ժամանակ տպաւորութիւն չէր կարող գործել այդ մառախուղը մարդկանց սրտերում:

Ների ունոցը աստիճանաբար սաստկանում էր եւ գիւղի սահմանից լսում էր սոսկալի հաջոցները: Մարդիկ՝ գիւղացիք այնպէս էին յոգնել ու դադրել, այնպէս էին լքանել ու թմրել. քնելու խորթացել, որ ոչ ոք չէր ուշք դարձնում այդ հաջոցներին: Բայց հաւատարիմ կենդանիները իրար հետ բոյոր ոյժերով հաջում էին անընդհատ: Հեռուից լսում էր եւս ձիերի ոանաձայնն, որոնք աստիճանաբար մօտենում էին գիւղին եւ կարծես ձիերն էլ յոգնած, ուժասպառ, գիւղի շների ունոցի ծայնից բաջալերւած, աշխատում էին ժամ առաջ համնել իջևան եւ հանգստանալ: Զիտորները շատուր չէին, չորս հոգի էին եւ բոլորն էլ զինւած, որոնց բարձրացրած աղմուկը բորբոքում էր Նինոցի շներին:

Վերջապէս մտան գիւղ եւ այս ու այն կողմ ոլորւելուց յետոյ, եկան իջան Վարդեւանի դռանը: Մի քանի անգամ դռւուր զարկին եւ ձիաւորներից աւելի համարձակը իջաւ ձիուց, բարձրացաւ կառւը եւ ձեռքի մտրակով շների հետ կուշտելով երթիկից ծայն

տւեց.

—Վարդեւ'ան, Վարդեւ'ան, դուռը բաց:

Մի քիչ յետոյ Վարդեւանը Յրագը ձեռքը դուրս
եկաւ եւ բակից ինչինչ հարցեր տալուց, պատասխան-
ներն ստանալուց յետոյ, դուռը բացեց եւ ներս քաշեց
անկոչ հիւրերի ձիերը: Չորս ձիաւորներից երկուսը
դատաստանական ատեանի ծառայող էին, մինը ոս-
տիկան եւ չորորդը Վարդեւանի պահանջատէր՝ Գէ-
ռորդ աղան էր: Հենց այդ միջոցին ամպերը սաստիկ
գորգում էին եւ փայլատակում էր, բայց Գէռորդ ա-
ղաի անակնկալ գալուստը միայն շանթահարեց Վար-
դեւանին:

Հիւրերին ներս առաջնորդեց Վարդեւանը, ձիե-
րը ախոռը կապելով, բայց դրանց կերակրելու ոչինչ
չուներ տանը: Ոչ կաթն ուներ, ոչ մածուն, եղն ու
պանիրը վաղուց էր սպառել, իսկ հացը առաւօտ մի-
այն թխելու էր Գարանը: Խոտ, գարի, դարման, եօն
զա նշոյն անգամ չէր մնացել:

—Զիւրին հօնջա տո՛ւր, ասաց ոստիկանը հրա-
մայական եղանակով:

—Եօնջա[°], ասաց ապուշ ապուշ Վարդեւանը,
այս տարւան բքերն ու ցրտերը տունը հէրթ շատ
թողի[°]ն, որ ես մարաքի անկիւններից ձեր ձիերի
համար եօնջա գտնեմ:

—Խոտ բե՛ր... ասաց վրդովւած ոստիկանը:

—«Ես ասում եմ թէ՛ներքինի եմ, նա կըկին հարց-
նում է, քանի[°] որդի ունիս. . .»

—Ահա, էֆէնդի, թէ ի՞նչ անխիղճ են այս գիւ-
զացիք...: Ես որ ձեզ պատմում եմ, դուք չէք հաւա-
տում, ասաց բորբոքւած Գէռորդ աղան: Կէս գիշերին,
այս անձրեւին, փայլատակումներին ու ցեխին ես ո՞ւմ

դուռը գնամ եւ պարեն գտնեմ մեր ձիերին: Դադրած անասունները հիմի տանջանքից կը կոտորւեն:

— Ի՞նչի չէք հաւատում, աղա՛, ինչի՞ էք ամբաստանում, ահա ճրագը, ահա մարագներս..: Ճրամմեցէ՛ք, ես ձեզ կ'առաջնորդեմ ամեն տեղ, դուք խօ տանըս լաւ ծանօթ էք: Եթէ մի բան գտնէք, ես արժանի եմ ձեր նախատինքին ու մեղաւոր, ապա թէ ոչ, դուք ի՞նչ էք պատասխան տալու ձեր խղճին. . . :

— Ծո՛, հիմի հաւատա՞մ, որ մի բուռը խոտ, կամ դարման էլ չունիս:

— Արեւս վկա՛յ, գլուխդ վկա՛յ, աղա՛, ինչի՞ ես անհաւատացել. . . :

— Ախար անլեզու անասուններին խօ չե՞նք կարող սպանել. . . :

— Ի՞նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնիմ:

— Դրկեցից փոխ ա՛ռ, պարտք վերցրու, գնա փողով գնէ, ես կը վճարեմ.

— Այո՛, եթէ լինի, եթէ ունենան, ասաց Վարդեւանը հառաջելով:

— Ծո՛, փողն որ ցոյց տաս, հոգիներն անգամ կը ծախեն, ասաց Գէորգ աղան:

— Զըկայ, չունին. . . : Հաւատա՛ խօսքիս:

— Գնա՛, ասաց պաշտօնապէս էֆէնդին Վարդեւանին, այս ոստիկանին էլ տար եւ ձեր քէհաինասա, որ մեզ համար խոտ, գարի գտնի եւ ինքն էլ գայ, նա մեզ սննիջապէս հարկաւոր է:

Վարդեւանը ոստիկանի հետ գնաց, եւ բաւական ուշացան, մինչեւ մի խուրձ հոտած ու ապականած խոտ գտան ու բերին: Մինչ երկուսով էին մնացել սենեակում գաշխառուն ու պաշտօնականը. առաջինը ասաց.

— Եֆէնդի՛, սաստիկ յամառ է այս անիծածը, գուք պիտի աշխատիք սրան վախեցնել, յետոյ քիչ քիչ համոզել, որ գրաւ դնէ ինձ մօտ հողերը, մինչեւ փողիս վճարելը: Հակառակ պարագայում գուք սպառնացէք, որ անուրդով ծախել կը տաք ինչպէս շարժական, նոյնպէս անշարժ կալւածները:

— Դու անհոգ կաց, Կէորդ աղա՛, ես նրան մեղքամոմից կը փափկացնեմ:

— Դուք չը գիտէք, Եֆէ՞նդի, սրանք ի՞նչ սերունդից են. որ կտրտես, դարձեալ իրենց խօսքը չեն փոխել: Պէտք է խիստ վարվել եւ դաժան դէմք ստանալ: Հակառակ պարագայում զուք կ'անցնի մեր այցելութիւնը. . . :

— Թէ զուք անցաւ կան, Թէ շնորհքս չը տեսար այսօր այնտեղ, այստեղ էլ մի եւ նոյն բանը կը պատահի. . . :

— Այնտեղ ուրիշ էր դրութիւնը, այնտեղ ձեռքումք հրամանագիր ունէիր դատարանից, այնտեղ կարգադրւած էր անել այն բոլորը, իսկ այստեղ պէտք է հանգամանքից օգուտ քաղել եւնենգութեամբ, երկիւղի ազդեցութեամբ գործ տեսնել: Դուք վստահ եղիք, ես կարող եմ երեք, չորս օրից կարեւոր թղթերը դուրս բերել Հուգուգից (դատարան) եւ սրա համար, բայց առում եմ, որ առանց այդ ծախսին այս գործն էլ կարգի բերենք:

— Դու խոստացածդ երկու լիբան պատրաստիք, ես քու գործդ, ինչպէս խօսք տւի, գլուխ կը բերեմ: Գրաւականով մուրհակ չե՞ս ուզում, կալւածների ապահովագրութեան թերթը չէ քու կամեցածը, ես կարգի կը բերեմ, էլ ի՞նչ ես ուզում:

Վերջապէս քեհան եկաւ Վարդեւանի հետ: Գիւ-

դում դեսից, դենից քիչ գարի էին գտել, հաւի կուտից, բունկալների խոտից հաւաքել, բերել էին ձիերին: Եֆէնդին երկար բարակ գիւղապետ քէհախն նախատելուց, անարգելուց եւ հայիոյելուց յետոյ ասաց.

—Քեզ կանչել եմ, քէհա՛, որ վկայ լինիս այստեղ: Գիշերս, ես, Արգրումի Հուգուգ մէջլիսի կարգադրութեան համաձայն, ցուցակագրելու եւ գրաւելու եմ Վարդեւանի կայքը. Գէորգ աղախն ունեցած պարտքի հաշւին: Թէ շարժական եւ թէ անշարժ, ինչ որ ունի բոլորը պիտի ցուցակագրեմ: Քեզ կանչելուս պատճառը այն է, որ ինչ որ ունի, չունի, բոլորը մէկ մէկ մեզ յայտնես, առանց ծածկելու, որպէս զի ապագայումն էլ պատասխանատու մնաս' ծածկւած ապրանքների համար:

—Իշխանութեան հրամանին հնազանդելու պարտաւոր ենք, բայց ինդրում եմ, թողէ՛ք այդ գործը մինչեւ լոյս: Մինչեւ այն ժամանակ գուցէ աղան հաշտւի մի կերպ Վարդեւան աղբօր հետ: Եթէ չը հաշուին, գոնէ ես միջոց կ'ունենամ առաւօտ դրացիներից նրա ունեցած չունեցածի մասին տեղեկութիւններ հաւաքել եւ ձեզ լիովին, Ֆշգրիտ գեկուցումը տալ:

—Այդ ես չը գիտեմ, ասաց Եֆէնդին, եթէ Գէորգ աղան համաձայնի, ես արգելք չունիմ: Ես եւ կը խնդրեմ, որ եթէ հնարաւոր է հաշտւի...:

—Վարդեւան աղբս'ր, ախար գործդ ինչի՞ ժամանակին կարգի չես դնում, ասաց քէհան, որ դուռը կէս գիշերին պաշտօնեայ գայ: Ամօթէ, մենք հայ քրիստոնեայ ենք, ես կը խնդրեմ Գէորգ աղախն, որ ներողամիտ լինի քու պակասութեանը: Մենք առանձնանանք ու կարգի բերենք հաշիւդ, առանց դրացի ներդ բանը լսելու: Առաւօտ վաղ վեր կենան ու գնան,

պատիւդ էլ դուռ դրկեցի մօտ հողի հետ չը հաւասարւի:

—Զգիտեմ, ի՞նչ պատասխանեմ. . . : Միթէ՞ այս քրիստոնէութիւն է, միթէ՞ այս մարդկութիւն է. . . : Միթէ՞ Աստւած չը կայ, խիղճ չը կայ. . . ասաց հեկեկալով Վարդեւանը եւ ծայնը կոկորդի խորքերում խեղդւեց:

—Անխի'ղճը, անաստւա՛ծը դու, դու ես, ապերա՛խտ, ասաց կատղած Գէորգ աղան: Փող ուզելու գալիս հրեշտակ էք գառնում, ողորմելի, անմեղարարածներ, իսկ մենք երբ փողերս ետ պահանջելու լինինք, օծի նման աղուն ու թոյնը բերաններդ մօտենումէք մեզ խայթելու: Մեղաւո՞ր եմ, որ փողս ետ եմ պահանջում, յանցաւոր եմ, երբ իրաւունքս եմ պաշտպանում. . . . :

—Փողդ պահանջելու իրաւունք ունիս, քեզբան ասող չը կայ, բայց պաշտօնեայով դուռս գալիդ օջախըս քանդեց, կրակս մարեց. . . :

—Ես տասն ու հինգ օր առաջ աղբօրս ուղարկեցի, քեզ կանչեցի քաղաք, բայց դուն անտարբեր, մի պատասխան անգամ չը ճամբեցի՛ր:

—Ես խոստացայ գաև, բայց ցանքից չը պըծայ

—Ո՛չ, ո՛չ, դու փախս ես տալիս, դու, երեք տարի է, ինձ մատի վրա խաղցնում ես: Խաբխփում ես. . . :

—Ի՞նչ երեք տարի, ի՞նչ խաբխփել, աշունքը քեզ մօտ չէ՞ի, որ երկու լիրա տւի, կալին ինձ մօտ չէիր, որ երկու սոմար գարի տարի՛ր, անցեալ գարնան մատակներս չը ծախեցի եւ քեզ չը յանձնեցի՞ երեք լիրա: Ախար խիղճ ունեցի՞ր: Հինգ լիրա հինգ տարի առաջ փող ես տւել քանի տարի է զնարում եմ, տալիս եմ, չեմ պըծնում, հիմա էլ. . .

—Անօրէ՞նի լեզւին աշէ, խօսածն իմացի՞ր եւ զըրպարտութիւնները լսէ.. . : Թէ մուրհակդ մօտս չը լինէր, պիտի ուրանայիր եւ կուլ տայիր փողերս: Երեք տարի առաջ տասն երկու լիրա եմ տւել կանխիկ փողով ահա՛, կարդա մուրհակդ. . . .

IV.



Այո՛, այո՛, ես չեմ ուրանում, ճիշտ է, այդ մուրհակը ես եմ տւել, միայն հինգ ոսկի փոխարինութեանս վրա երկու տարեկան տոկոսիքը, ճախսերը եւ տուգանքը վրա եկաք, ինձ պարտաւորացրիք, ստիպեցիք ստորագրելու այդ մուրհակը: Նեղն էի, հանգամանքից օգտւեցիք եւ հարիւրին քառասունը ութ տոկոս վեր առիք, տոկոսի էլ տոկոսը վրա եկաք, գլութեցիք ինձ հորը եւ այժմ ի՞նչ է մտքերդ, աղա՛, եկել էք ձեր ոչխարին մորթելու, ահա՛, մորթեցէ՛ք, . . . : Բայց առաջ մանը ու խոշորիս խեղդեցէ՛ք, սպանեցէ՛ք, յետոյ էլ ինձ. ուզում էք բութ դանակով. . . .

—Այդ յիմար ցնդաբանութիւններիդ մարդ չի հաւատալ. ես քեզ հինգ ոսկի տւել էի, նորն էլք գիտեմ ոքա՞ն տւի, տոկոսն էլ վրա եկանք ու մուրհակ ստացանք,

—Անխի՛ղճ անհոգի՛, դու էլ ե՞րբ ես ինձ փողտւել, քացի հինգ ոսկին, . . . : Երդւի՛ր, մի երդւի՛ր զաւակներիդ արեւովը, ես, ես ոչ թէ տասներկուս, քսանը զրս ոսկի էլ տամ: Նատ բանդ իմացել էի, բայց երես երես ստեղու աստիճան աներսուրիւնդ չէի գիտ եցել:

— ես սուտ եմ խօսում, երբ քեզ նման զգւելի արարածին հանում, կարմիր ոսկի փոխ եմ տալիս, ցաւում վրան, օգնութեան հասնում, աներես ե՞մ դառնում: Յայտնի բան է տոկոս էլ պիտի ստանամ: Հապա որտեղ ես իմացել, որ առանց տոկոսի փող տան:

— Տոկո՞ս, անխի՛ղճ, անհիգի, երկու տարւան մէջ հինգ ոսկին ի՞նչպէս տասներկու ոսկի դարձաւ, իսկ երեք տարի է, տալիս եմ, տալիս եմ, փռղը փող, կալի մէջ ցորեն, եղն ու պանիրը, հաւն ու գառը, ելի չե՞մ պրծնում,

— Դէ՞ի տեսէ՛ք տեսէ՛ք ի՞նչ խայտառակն է եղել: Մի պուտուկ իւղ է բերել, կամ տոպրակով մածուն, կամ մէկ երկու կաժ պանիր եւ ուզում է դրանցով պարտքը վճառած համարել:

— Ինչպէս թէ մի պուտուկ եղ. ախար տաշտով չորս լիտր դուռդ բերի անցած տարի, չորս լիտր այս տարի: Նեռու տասը լիտր անքաշ պանիր բերի, դումանը մունք բերածներս ինչի՞ ես. յիշեցնում եւ խոշորները մոռանում,

— Հապա իմ փողս տոկոս չունի՞՝ գեադա՛կ; Ես խո՞ քեզ նման էշ գիւղացի չեմ, որ ցորեն ցանեմ, գարի ցանեմ եւ տարեկան մէկ անգամ քաղէմ: Ես եօնչա եմ ցանում, եօնչա՛, որ քեզ նման իշաներիտ ջրել տամ եւ տարեկան չորս—հինգ անգամ ժողովեմ: Եղն էլ պիտի տաս, պանիրն էլ, խոտն էլ, ցորենն էլ գարին էլ գառն էլ ու ծին էլ եւ այդ բոլորը տոկոսի տոկոսի մէջ, . . : Զէք ուզում վճարել, ինչի՞ էք գալիս վիզ ծռում ու փոխ ուզում: Ով որ ինձանից փոխ ուզէ, պիտի տմեն բան աչքն առնէ: Ես ոչխար կով չեմ պահում, ինձի մատեան պետք չէ, իմ փո-

զերս, խոզի նման, տարեկան երեք չորս անգամ են ցնդնում եւ ամեն անգամ տասնեակներով, . . . :

— Հապա տւածս երկու լիրա մէկ անգամ, երեք լեռան անցած տարւան, երկու սոմար գարին, հեռու չեւ առաջի տարւան երկու սոմար ցորենը, երինջներա գլխից չե՞ս ինչնելու, . . .

— Տոկո՞սը, շահը, շահի շա'հը, քանի՞ տարի է, . . . :

— Որ այդպէս է, ոյժն էլ քու կողմդ է, ահա էֆէնդին, սոտիկաննու գործակալը քեզ թեւ ու թիկունք են կանգնած, վեր առ, մի անգամ ինչ ունեմ, չունեմ, վեր ա՛ռ, մեզ էլ բոլորիս մորթէ ու տար, . . . : Տա'ր, տա'ր, ամենն էլ քեզ լինի, Աստծու կրակն էլ գուցէ կշռանաս :

— Էֆէնդի', սա այնպէս հաստակող անիծւածն է, այնքան յամառ ու անկոտրումն, որ մինչեւ ուժ ու բռնութեան չենթարկւի, չի փափկիլ: Ես խնդրումնեմ իշնց գիշերս, անմիջապէս գրեցէք սրա ունեցածն ու չ'ունեցածը, ցուցակագրեցէք, պահ տւէք ու գնանք: Ես այս գեղի մէջ քառասուն մարդու վրա պահանջ ունիմ, ոչ մէկին սրա նման դիմադրձ ու յամառ չեմ տեսել, ոչ մէկից այս պատասխանները չեմ ստացել: Սազի գիւղերում չորս հազար մարդու հետ գործեմ բռնել, լաւ ու գէշ եմ եղել, ոչ մէկը ինծ այս պատասխանները չէ յանդնել տալ: Ես ամբողջ կարողութիւնս կը փչացնեմ եւ չեմ թոյլ տալ, որ սրա նման հաստակողերն իմ ո՛չ թէ փողս, այլ նրա տոկոսի տոկոսը, եւ ո՛չ պոչն անգամ կուլ տան: Սրանք ան խիղճ, անհոգի գիւղացի են, եթէ իրաւունք ձեռք ծգեն, մարդու կաշին առանց մորթելու կը քերթեն: Գրեցէք, խնդրումնեմ, մի՛ ժամանակը կորցնէ՛ք, ես

մինչեւ որ սրա ունեցածը, չո՛ւնեցածը, պապենական մնացած արտերը աճուրդով չը ծախել տամ, չեմ հանգստանալ: Մրա նման օձերի գլուխ պէտք է փշրել որ մնացեալները իրենց պարտականութիւնը նանազեն եւ ուրիշի իրաւունքը կուլ տալու աչք չըտնկեն:

—Աչքդ ես գիտեմ, որ արտերիս վրա է, բայց ականջիդ ետեւը կը տեսնես, իսկ միւլքերիս կոչանը (ռյում) չես տեսնել. . . . : Անխի՛ղթ, անհոգի՛, խելքդ, միտքդ խեղճ գիւղագու մի թիզ հողի վրա է: Աշխարհք շորթեցի՛ր, չը կշտացար, որի հետ հաշիւ ունեցար, տունը, տեղը, հանդն ու մարգը խլեցիր, մոխրի վրա մանր ու խոշորին թողիր, իրենց էլ առանց ծախու գնելու գերեցիր ու վարեցի՛ր. . . . հիմի էլ հերթն ինձ հասաւ: Առաջ ես կը տանիեմ, իմ ձեռքով ոռոիքս, կրիկս կը մորթեմ եւ յետոյ դու էլ ինձ սպանիր ո այնպէս զաւթիր Վարդեւանի հողերը: . . . :

—Ի՞նչ ես շատ լիզէիդ տալիս, ասաց ոէհան խօսքի մէջ մոնելուի. Նա քու արտի վրա ինչի՞ պիտի աչք տնկէ: Հող չունի, հողի կարու է՞, մարգ չ'ունի, մարգի պետք ունի՞, թէ աշխարհի վրա նրան մարաբա է՞ պակաս.

—Ծօ՛ դու իմ փողս տուր, ծո՛ դու կարմիր ոսկիս տուր, գիխուռ իռով մնա ոու հողդ էլ միւլքդ էլ բե՛ր փողերս տուր, ես գնամ. . . . :

—Աւելորո խօսակցու թիւնների ժամանակը չէ, ասաց էֆէնդին, հիմի քեզ հարցնում եմ, այս մարդու ունեցած պարտքդ սնմիջապէս ևարոդ ես կանխիկ դրամով վճարել, աւելացնելով դրա վրա դատաստանական ծախսերը եւ իմ հանապարհի ծախսը վարձիս հետ: Հակառակ դէպքում, ես համաձայն Արզուրումի

Բիդայէթի վճռի, գիշերս, պարտաւոր եմ իսկոյն գրել եւ գրաւել բոլոր կայքդ ու կարողութիւնդ:

—Ես բան չ'ունեմ ասելու, պատասխանեց հառաչելով Վարդեւանը, միայն ինդ բումեմ, որ այդ վճռի պատճէնը տաք ինձ, առաւօտ մեր մօլլախն կարդալ տամ եւ բովանդակութիւնը հասկնամ, ապա դուք էլ կատարեցէք ձեր պարտականութիւնը:

—Ես մինչեւ առաւօտ չեմ կարող սպասել, իսկոյն պետք է սկսեմ ցուցակագրել:

—Ես, էֆէնդի, ձեզ դէմ բան չ'ունիմ, կարող էք եւս իսկոյն կատարել ձեր գործը. բայց ես կասկածում եմ Գէորգ աղափ վրա, . . . : Նա շատ անգամ կեղծ վճռներով եւ սուտ պաշտօնականներով այս ու այն գեղն է գնացել եւ խաբէութիւններով ժողովրդին կեղեքել: Ես չեմ ասում, որ ձեզ նման մի մարդ կարուիլ խարդախել, բայց Գէորգ աղան ձեզ էլ կարող էր խաբել մի սուտ թղթով: Առաջ կարդանք, վճռի բովանդակութիւնը լսենք, յետոյ:

—Անհաւա՛տ, անօրէն, շուն, կարծումես ես քեզ խաբումե՞մ, թէ ես գիր չը գիտե՞մ եւ կամ չեմ ճանաչում Բէդայէթի վճռի իսկութիւնն ու կեղծութիւնը: Նեմի թեւերդ կապել կը տամ, այնքան կը թակեմ, որ կաշիդ կը պոկեմ, . . . : Առաջս կը խառնիմ շղթայակապ ջարդելով քեզ քաղաք կը տանեմ եւ բանտ գցել տալով, տարիներով ոսկորներդ կը փթեցնեմ, : Դու տէրութեան պաշտօնականին դիմադրում ես նրան խարդախ ե՞ս անւանում,

—Էֆէնդի՝ ախար. . . .

—Լի՛րը, անզգամ, կարծում ես, չը գիտեմ, որ անցեալ շաբաթ, ութն օր իինգ ջան—Փիդան (անձ-

նազո՞ի) տունդ պահեցիր, միւզիր (վնասակար) աւազակ՝, ես քու գլուխդ փշթել կը տամ:

— Եֆէնդի՛, ներողութիւն եմ խնդրում, ես ձեզ անպատւելու ո՛չ մի միտք չո՛ւնեի, ես միայն խնդրում եմ վճիռը, վճռի պատճէնը տւէք, կարդանք, . . .

— Ես քեզ այդ դասերը տւող ջանմիդանների տեղն էլ գիտեմ, ես քեզ նրանց քով գցել կը տամ, բանտում թո՛ղ էլի քեզ նորանոր դասեր տան:

— Եֆէնդի՛, մի՛ ինձ վրա զայրանալ, ես մեղաւոր ե՞մ, եթէ իրաւունքս ցանկանում եմ պաշտպանել: Եթէ կամենումէք, գնամ խնդրեմ, անկրողնից բարձրացնեմ մեր գիւղի մոլլախն, գայ, կարդայ վճիռը եւ ապա արիք, ցուցակագրեցէք, ինչ որ կամենում էք:

— Դո՛ւ անօրէն, անհաւա՛տ, ուզումես փախչել որպէս զի ես գործս չը կարողանամ առաջ տանիի Գէորգ աղափ գործը ետ մնայ եւ ինքդ ազատւիս դադաւորների ձեռքից: Բոնեցէ՛ք այդ անօրէնին, մի թողնէ՛ք շէմքից դուրս գնալու:

— Ո՛չ մի տեղ չեմ գնալ բայլ թո՛ղ վկայ լինի քէհան, որ դուք, առանց Բիդայէթի վճռի ներկայացնելու էք ցուցակագրում իմ կայքս: Ես արդէն գիտեմ իմ անելիքս, տարէ՛ք քաղաք, այնտեւ դադարանի առաջ կը խօսիմ ես Գէորգ աղափ հետ, թ'ող նայս գիշեր իւր ցանկութեանը համի, իսկ վաղը....

— Ահաւասիկ Բիդայէթի վճիռը, կարգադրութիւնը, ասաց Եֆէնդին կակազելով եւ ծոցի վճիռք պատճէնը ցոյց տւեց եւ կրկին ծոցը գրեց:

Վարդեւանը դատարանի պաշտօնականի թոյլ շարժումներից եւ բորբոքումներից զգացել էր, որ նրա ձեռքում վճիռ չը կայ, իսկ երբ իբրեւ վճիռ ցոյց

տւեց մի թուղթ ու կրկին ծոցը դրեց, բոլորովին գիւղականի համար պարզւեց, որ դա մի շինժու գործ էր եւ դրանով ցանկանում էին իրեն նեղը գցել եւ ծեռքից մի բան կորզել: Այդ խսկ պատճառով նա աւելի յամառեց եւ անդեց իւր խօսքը:

—Վարդեւան աղբա՞ր, ասաց մէկ կողմը քաշելով քէիան թշւառ պարտապանին, մի' այդքան պնդել եւ զայրացնել անհաւատներին, կարող են քեզ վնասել: Չը տեսա՞ր, չիմացա՞ր անօրէն, անխիղճը ի՞նչ զրպարտութիւնների պոչից բռնեց: Խսկ խո՛ Գէորգ աղափին գիտես, նա ամբողջ կարողութիւնը կը դնէ, ամեն ցած միջոցի կը դիմէ եւ քու հախից կը գայ:

Վարդեւանը վրդովւած, թոյլ հառաջանքներ արձակելով լսում էր իւր դրացուն, որի խօսքերը թունաւորւած սլաքի նման մտնում էին, թափանառում էին նրա հոգու խորքները:

—Ա՞րի՛, յամառութիւնը բաց թո՛ղ մի կերպ եօլա գնա՛, խաղաղւիր, պլծի՛ր: Դու խօ չե՞ս կարող Գեորգ աղափ դէմ ասպարէզ դուրս գալ: Այն գործն որ լաւութիւնով կարելի է վերջացնել, քանի՛ քանի տեսակ պիտի վնասւիք, որ գիշութիւնով իրարուց վրէժ լուծէք: Բե՛ր մի բանի կապենք:

—Չեմ կարողանում դատել, ուշքս վրաս չէ, քէիա՛, արա ինչ որ կամենումես:

—Բե՛ր, բե՛ր մի նոր մուրիակ գրենք, մէկէլ գրաւականի թուղթ տուր Գէորգ աղափն ու գործը վերջանայ: Ինչ որ է, ես կերթամ, կը խնդրեմ հաշւէ ու վրան գալրվնոր մուրիակ գրէ մինչեւ կալ, կամ մի տարի ժամանակի. . . .

—Այնքան տւածներից զոկ, նորից վրան տոկոս

գայ, . . . : Արտերս գրաւ դնեմ որ տունս տեղս քանդէ,
ինձ էլ մարաբա շինէ, եօթը պորտիս իրեն լակոտ-
ներին առանց գնելու գերէ ու ստրկացնէ: Ո՞չ ո՞չ թո՞ղ
ինչ ուզումէ անէ, ես նրան, քանի որ ողջ եմ, եւ ո՞չ մի-
ականջ հող կը տամ, ո՞չ էլ ճորտ կը դառնամ,

V.



Էորգ աղան նպատակին չը հասաւ, Վարդեւ-
անը յամառեց եւ թէեւ մտրակի տակ ընկաւ, ոստի-
կանն ու դատաւորի ներկայացուցիչները նրան մի լաւ
գզեցին, բայց առանց կարողանալու արձանագրու-
թիւն կազմել, լուսադէմին պարտաւորւեցան հե-
ռանալ: Քէիան էլ ծեռքը մնաց դարտակ, թէեւ պատ-
րաստւել էր մատնել Ֆշտութեամբ Վարդեւանի ինչքը:
Դառն տանջանքով, վիրաւորւած եւ ջարդւած մար-
մնով Վարդեւանին իւր տարած յաղթութիւնը այն-
քան վսեմ, այնքան բարձր էր թւում, որ չէր էլ զգում
մարմնի կապտածների ցաւը: Այդ յաղթանակի քաղ-
ցրութիւնն ու փառքը նրան այնպէս էր ոգեւորել
որ նա աւելի մի բերդի տիրող զօրավարի էր նմա-
նում այդ օրը, քան թէ հասարակ հողագործի:

Ճշմարիտ որ նա այդ օրը նխնոցի հերոսն էր:
Ներոս, որը ոչ միայն ոստիկաններին, դատարանի
գործականներին դատարկ էր նամբել իւր դռնից,
այլ մինչեւ անգամ Գէորգ աղաի նման տգրուկին, որ
քամել էր ամբողջ Սագի դաշտեցւոց արիւնը, խայ-
տառակ ետ էր դարձրել: Արքան սրտեր այդ օրը
հրճւել էին, որքան հոգիներ ոգեւորւել եւ մխիթար-
ւել, . . . : Նրանք, որոնք տնքում եւ տքացէլ էին Գէորգ
աղաի վաշխարական ճանկերի տակ. յոյսի հառաջնե-

Ներով էին լսել դէպքի մանրամասնութիւնները։ Որքա՞ն բերաններ օրինել էին Վարդեւանին եւ այդ անցքի պատճառով անիծել ու երկինքից պատիժներ ու պատուհաններ հայցել անօրէնի համար։ Գէորգ աղախ ճնշած ու հարստահարած ոգիների սրտումզարթնել էր մի միտք, մի զգացմունք. ոյժով ընդդիմանալու այդ արիւն քամող հարստահարչին, , Պաշտպանւելնրա գազանային ժանիքների դէմ։ Բայց շատերի համար շատ ուշ էր, արդէն դրանք կորցրե, էին ոչ միայն իրենց կարողութիւնը, հողը, այլ դարձել էին մարտրա, . . . : Խոկ մարաբան ի՞նչ կարող էր անել իր տիրոջ դէմ, որին պատկանում էր իւր տունը, կայքը, անսառունները, գործիքները, երկրամշակութեան բոլոր պարագաները եւ հողը, . . . : Զայրացած տէրը՝ աղան եթէ վեր առնէր այդ բոլորը, չէ՞ որ սոված ու քաղցած կը կոտորւէր նրա ընտանիքը։ Խոկ անունը կոտրւած, դուրս հանւած մարաբային ո՞վ հաց կտայ, ո՞վ գործ կը տայ, :

Որքա՞ն կանայք այդ օրը էրնէկ էին տալիս Դարանին, որը Վարդեւանի նման մարդ ունէր, որը կեանքի պյնքան դառը բովերի մէջ, ամեն նեղութիւն քաշել բայց մի թիգ հող չէր ծախել, ամեն թակարդ քանդել էր եւ ծուղակներից ազատւել, . . . Խեղ՛ճ կանայք լալիս էին իրենց վիճակն, որ անզգայաբար իրենց ամուսինների թուլութեան ու մեղկութեան, տգիտութեան ու կարճատեսութեան պատճառով, ամբողջ գերդաստուններով մարաբա էին ընկել եւ տարեկան սոսկալի տանջանքների արդիւնքը, ձնին, բքին ու տօթին, քամուն ու փոթորկին դիմադրելով ձեռք գցած բարու կէսը, ձեռքերն ու ոտքերը ջարդելով, գլուխն

ու բունը դառն քրտինքի մէջ ողողելով ու ծնկները փէտացնելով ժողոված պառւղը կիսելու էին իրենց տէրերի հետ, իրենց աղաների հետ: Առանց գնի, առանց վաճառք հանւելու, առանց սակարկւելու եւ առանց դաշնագրի ծախւել էին, մատնւել էին յաւիտենական գերութեան եւ մատնողները չէին էլ զգացել որ մարաբա մտնելով, ինչ ոսսկալի անարգ վիճակ էին պատրաստել իրենց տան համար:

Մարաբաի աղան հանդում ցանւած բարու բէրքը կեսումէ, խոտն ու հերթը պարտաւոր է ժողովել մարաբան, տանել քաղաք եւ աղաի ցոյց տւած վայրը յանձնել: Կովերը, մատակները, կամ ոչխարները կթեև իւղ պանիր պատրաստել եւ աղաի որոշւած, բանէ, կեսից շատ բաժինը նրա տունը տանել: Հաւից հաւ, ձւից ձու, գառն ու հորթը, գեադակն ու քուրակը, ամեն բերքը կիսում էր աղան: Դեռ այդ հերիք չէ ասրէկտուրից ժողովւած բրդից մարաբաի կինն ու աղջկները պարտաւոր էին մանել ու ներկել, կարպեա, կամ խալի, շալ թէ ջէջիմ գործել եւ տանել տղային յանձնել: Սայլերը լծել, անտառ գնալ փայտ բերել աղային տանել: Ակը „բառմա“ գցել եւ աթառ կտրել ու կէսը տանել աղախն յանձնել: Դեռ այդ հերեր չէ Մարաբաի հարսն ու աղջիկը գարնան, թէ աշխան սարն են բարձրանալու ժախ ու զոխ, երիժնակ, թէ սունկ ժողովելու եւ ջւալներով աղայի տունը կրելու Զէ կարելի նկարագրելով հասկացնել, թէ ինչ սոսկալ եւ տաժանելի աշխատանքով ժողովում են գազը, որ տանեն յանձնեն առատաբար վառելու աղաի տան թոնիրը:

Բազմապահանջ աղան չը բաւականունալով այ-

ծառայութիւններից, ո'չ միայն տեղի անտեղի առաջարկներ է անում, որ մարաբսի կինն ու հարսը, տղան կամ աղջիկը գնան իրեն տունը, ցորենը լւան, չորդնեն, տանեն ջրաղաց, բնադօնը աղան, կորկոտը թէփից հանեն եւ դեռ ամբարների ցորենը մաղեն, հողից, աղբից եւ մաքրեն: Ել չը գիտեմ ի՞նչ ի՞նչ ծառութիւնները կատարեն, դեռ պահանջումէ գիւղացուն յանձնւած կայքի, անասունների, գործիքների ու կալւածքի արժէքի փողի սոկոսիքը վճարել իրեն,..... իսկ ընտանիքը օդով եւ ջրով կերպակրել, ափսոսալով, որ չի կարող եւ դրանց վրա հարկեր սահմանել:

Այս վիճակից էր խոյս տւել Վարդեւանը եւ երբէք մարաբայութեան հետ չէր կարողանում հաշտւել չը նայելով որ իրենց գիւղի բնակութեան մեծ մասը սրդէն մարաբա էր դարձել եւ օրից օր մարաբա դառնալը անխուսափելի պահանջ էր դարձել գիւղացու համար, կեսանքը մի կերպ պաշտպանելու եւ անկումը քիչ հեռացնելու դիտմամբ: Վարդեւանի սկզբունքն էր եւ նա յամառութեամբ չէր բաժանւում այդ մտքից—կամ անկախ գործել եւ կամ իսպառ չը լինել:

Հենց այդ օրերում, երբ ցանքսից ու տափնելուց նոր էին ազատել գիւղացիք, երբ դեռ բաղտ փորձուկ չէին մտել մի իրիկուն Մանուկը՝ Վարդեւանի հարեւանը գիւղի տէրտէրի եւ ուրիշ երկու դրացու հետ դիմեցին Վարդեւանի տունը: Գարանն ու Մարգարիտը բանից խաբար էին, իսկ Վարդեւանը յանկարծակի եկաւ: Տաք օրեր էին, անուշ եղանակներ, աստեղազարդ կապուտակ երկինքը պարզ եւ լուսնկան առաջի իրիկորէ իւր նորամահիկը ցոյց տւել ու

աներեւոյթացւել էր: Ներսը գուք սենեակում, կամ ախուսի կողքի սկարիւներում նստելու կարիք չը կար, բաց օդում, դրան առաջի երկու կողմից տան պատերով պաշտպանւած շւաքում էին նստել քարի նստարանների վրա եւ խօսակցում դրացիները դէսից դէնից:

Վարդեւանը այդ օրերը շատ այցելութիւններ էր ընդունել: Իւր դրացիները դաս դաս եկել ուրախակցութիւններն էին յայտնել, Գէորգ աղախն խայտառակ դռնից ճանապարհելու համար: Աչ միայն նխնցցիները, այլ մինչեւ անգամ մօտակայ գիւղացիները, Գէորգ աղաից վառւածները մէկ մէկ եկել խնդակցել եւ մանրամասնութիւնների հետ ծանօթանալով հեռացել էին: Արդէն ոչ միայն Սազում, այլ մինչեւ անգամ Արզուրում՝ քաջաքում ամեն փողոցում ու սրճատներում խօսակցում էին Գէորգ աղաի անյաջող խարէութեան եւ Վարդեւանի դռնից խայտառակ հեռանալու մասին: Բանը այն դրութեան էր հասել որ Գէորգ աղան ոչ միայն գանեկատ էր սկսել Վարդեւանի վրա ունեցած տաններկու լիրա պահանջի մասին, այլ տքնում էր օր առաջ պաշտօնեայ տանելու խայտառակել, ստորացնել եւ քարուքանդ անել մի այդպիսի ըմբոստ շինականի, որպէս զի պատիւը վերականգնի եւ միւս պարտապանները նոյնանման քայլեր անելու սիրտ ջանեն: Բայց գործը օրից օր ետաձգում էին պաշտօնականները, որպէս զի մի քան կարողանան պոլիել ժլատ վաշխառուից, որի քսակի քերանը անհամեմատ նեղ էր դրամ դուրս հանելու դէպքում:

Վարդեւանը սկզբում տովորական մի այցելու,

Թիւն կարծեց այդ դէպքը, բայց երբ առակներով ու օրինակներով տէրտէրն սկսեց Մանուկ աղքօր դիտաւորութիւնը յայտնել. Մարգարտին իրենց տունը հարսինդրելու մասին, մռայլեցաւ Վարդեւանը, դառն մտքերը եւ ծանը վշտերը նորոգւեցան նրա սրտի խորքերում եւ նա մոլորւած չէր իմանում ինչ կերպ պատասխան տալ իրեն այցելուներին: Տէրտէրն ու ընկերակիցները այդ բանը վերագրելով Վարդեւանի պատրաստականութեան, կամաց, կամաց իրենց պատգամաւորութեան նպատակը պարզեցին եւ յայտնեցին, թէ իրենք զստահ են, որ Վարդեւանը չի մերժելիւր դրացու հետ այդ խնամիական կապը կապելու:

Բայց այդ առաջարկը սրտի խորքերից խոցեց Վարդեւանին: Նախ, որ նա յիշեց, որ ինքը, որպէս հայր, մի մեծ յանցանք էր գործել իւր անդրանիկ որդու՝ Գեղեւոնի նկատմամբ, նրան ամբողջ երեք — չորս տարով նշանած թողնելով եւ ապա երկրորդ որդու վերաբերմամբ, որի ընկերակցին — տարեկցին արդէն ուզում էր նշանել իւր դրացի Մանուկը: Բացի այդ, որ նրա աղջիկը արդէն կաղուց էր հասել եւ իւր նեղութիւնների պատճառով անքա՞ն տռւնն էր մնացել, որ նէյլի մարաքա Մանուկը եկել էր, նրան հարս էր խնդրում, . . . : Ինքն, որ մարաքայութիւնից այնքան խորշում էր, եկել էին մարաքաների տռւն աղջիան հարս խնդրելու: Կտրատւեցաւ հօր սիրտը, մտածելով իւր զաւակների տարաքաղդ միճակի մասին, բայց ինար չէր գտնում դրանց այդ անել վիճակից ազատելու, . . . : Հողը պառաւել էր, պարարտացնելու միջոց չունէր, անասունները կոտորւել էին, ծախելը լծկանները աւելացնելու ինար չո՛ւնէր, փող չը

կար, գանելու էլ, ո'չ ինար կար, ո'չ էլցանկութիւն, իսկ դաժան պահանջատէր—վաշխառուն քիչ թէ շատ եղած չեղածը տանելուց յետոյ, դեռ սպառնումէր...:

Մոլորւել էր Վարդեւանը, ո'չ—այո՛—եւ ո'չ էլ—ո'չ—ասելու սիրտ չէր անում, իսկ Գարանը դրան ետեւից, Մարգարիտը պատուհանից անհամբեր սպասում էին պատգամաւորների հետ նրա վճռին: Գոռոզ մշակը չը զիջաւ, չընկնւեց եւ հաստատ մնաց իւր գաղափարին: Երկար երերումներից յետոյ յամառութեամբ ասաց.

—Մանուկ աղբա՛ր, զուր տեղ ես նեղութիւն քաշել եւ այս բարեկամներիս էլ ծանրութիւն պատճառել: Ես քեզ մի տարի առաջ ասացի, որ ես ժամանակ չ'ունիմ հարսնիք անելու: Դեռ նախ իմ որդուս եմ կարգելու, հարսիս տուն բերելու եւ ապա աղջկան մասին վճիռ կայացնելու: Բայց, քանի որ քանը այդտեղ հասաւ, ես քեզանից խնդրում եմ, որ քու տղիդ համար դու աղջիկ ուրիշ դռնում ման արի, ես աղջիկ չեմ կարող տալ մարարսի տան: Եղբա՛յր, ես ճշմարիտը խօսող մի մարդ եմ, իա՛ անասունը, իա՛ մարաբան, երկուսն էլ նոյն բանն է ինձ համար: Քանի որ դու աղաներ ունիս, ո'չ տունդ քուկդ է, ո'չ արտդ, ո'չ լծկանդ, ո'չ կթանդ, նոյնպէս քուկդ չեն, ո'չ աղջկներդ, ո'չ հարսներդ եւ ո'չ էլ կնիկդ: Ուզումէք ելէք բերանիս զարկէ՛ք, բայց տէր ունեցողը, իմ կարծիքով, իրեն սեփականութիւն չի կարող ունենալ: Աւելի լաւ է աղջիկս դնեմ, մորթեմ, քան թէ մարաբաի տուն հարս տամ, :

Այնպէս սառը տպաւորութիւն գործեց այս բառերը պատգամաւորների վրա, որ նրանցից ո'չ ոք չ

կարողացաւ պատասխանել: Եթք դրանք երկար լուռ,
մունջ, միայն տխուր ու աղեկէզ հառաջում էին, յան-
կարծ Գէորգ աղան պաշտօնականներով եւ ոստիկա-
ներով եկաւ, իջաւ Վարդեւանի դրանը: Տունը շրջա-
պատեցին եւ սկսեցին ցուցակագրել նրա կարողու-
թիւնը, :

VI.

— **Պ**ոփը ժայռի դէմ առաւ, ասաց Վարդեւանը,
եթք սկսեց դատարանի գործադիր վարչութեան գոր-
ծակալը մէկ մէկ արձանագրել նրա կայքն ու անա-
սունները: Նա թէեւ ջանում էր դիմանալ եւ այս հար-
ւածին, բայց մորմոքի սաստկութիւնից չէր կարողա-
նում զսպել այլայլութիւնը եւ արդէն նկատում էր,
որ մոլորութիւնը նրան տիրել էր: Եթք գործակալը ար-
ձանագրութիւնն էր կազմում, Վարդեւանը բոլոր նի-
գը թափեց մօտեցաւ նրան ու ասաց.

— Ինչի՞ էք արձանագրում իմ կայքերս, էֆէնդի'?

— Կը գաս քաղաք, բիդայէթում կ'իմանաս պատ-
ճառները:

— Բայց ինձ պետք չէ՞՝, որ յայտնէ՛ք, թէ ինչ պատ-
ճառով կազմեցիք այս ցուցակը:

— Գէորգ աղախն ունեցածդ տասներկու լիրա
պարտքի, նրա տոկոսիքի ու դատաստանական ծախ-
սերի համար:

— Լա՛ւ, բայց չէ՞՝, որ ես այդ տասներկու ոսկի
պարտքիս դէմ վճարել եմ կանխիկ փողով երկու ան-

գամով երեք եւ երկուս, ընդ ամենը հինգ լիրա:

—Ստացական ունի՞ս,

—Բայց նա չի կարող ուրանալ, քանի որ ութն օր առաջ ձեզ մօս, այսքան մարդու մօս խոստովանեցաւ, թէ՛ ստացել է:

—Ես ոչինչ չեմ ստացել, ասաց լրբաբար Գէորգ աղան: Այն տւածդ ուրիշ հաշիւ էր, ուրիշ գործի համար էր:

—Երկու սոմար գարի, սոմար ու կէս ցորեն է տարել, որ նոյնպէս չորս լիրա արժէ: Չորս լիտր իւր եմ տարել այս տարի, չորս լիտր անցեալ տարի եւ տասը լիտր պանիք, որ արժէն երեք լիրա: Ել ես քեզի ի՞նչ եմ պարտք:

—Քու հաշւովդ, ասաց դատարանի գործակալը պարտքը ամբողջապէս տւել ես, հապա ի՞նչի մուրիակդ ետ չե՞ս ստացել. կամ վրան՝ վճարածներդ գրել չե՞ս տւել...

—Ախ՛ էֆէնդի՛, միթէ՞ դուք չը գիտէ՛ք, միթէ դուք չէ՞ք ճանաչում այս անօրէնի հոգին: Մի անգամից փող չես ճարում, որ տանես եւ մուրիակդ ստանալով վճարես եւ դուրս գաս, օձիքդ ազատես այս տղրուկի ճանկից: Գիւղացի—մշակ մարդ, կտորկտոր փող է ձեռքերս անցնում, իսկոյն տանում ենք, տալիս, որ պարտքերից ազատւինք, վախենալով քովերս պահել այդ փողը. քանի որ միշտ նեղութեան եւ կարիքի մէջ ենք: Իսկ սրանից խո՞ չենք կարող կտոր կտոր փող յանձնելիս մուրիակը ետ պահանջել: Մենք գիր չը գիտենք եւ հաւատում ենք իւր խօսքին, թէ վճարածներս արձանագրում է, որտեղ որ պետք է: Ես իմ հաշւով, բացի տոկոսից, մի բան պարտք չո՛ւնիմ այդ անխիղթ ծրիակերին:

—Այդ իմ գործս չէ, ասաց Էֆենդին, եթէ վկաներ ունիս, եթէ կարող ես հտառատել, որ այդ փողերը եւ ապրանքը յանձնել ես Գէորգ աղափին, հաստատիր բիդայէթի առաջ, ապացուցիր, այն ժամանակ պահանջատէրիցդ ո՞չ միայն կըստանաս անտեղի ծախսերիդ վնասը, առանց նրան մի փարա վճարելու, այլ մինչեւ անգամ նրան կարող ես պատժել տակ բանտարկել առալ:

—Այո՛, ունիմ վկաներ, բայց եթէ գա՛ս, վկայե՛ն դատարանի առաջ: Գէորգ աղափ երկիւղից, ո՞վ կարող է գալ եւ նրա դէմ վկայել: Կայ ամբողջ Սագի դաշտում մի հա՛յ, որը պարտքով, կամ ուրիշ խնամական կապերով կապւած չը լինի այդ արիւնարբու աղափ հետ: Կամ եթէ գան, արդէօ՞ք դատաւորները կը լսեն այդպիսի վկաներին:

—Դու վկայ բեր կարգին եւ պատւաւոր մարդիկ, դատաւորները քու պահանջիդ բաւականութիւն կը տան, ասաց Էֆենդին եւ հրամայեց, որ անկողինները պատրաստեն, որպէս զի հանգստանան:

Քէիան հիւրերին իւր տունը տարաւ եւ առաւօտ վաղ Ֆանապարի գցեց դէպի քաղաք: Ամենքի խօսակցութեան նիւթը դարձեալ Վարդեւանն էր, նա գիւղի մէջ ամենքի ապշութեան եւ արմանքի նիւթ էր մատակարարում: Վարդեւանը առաւօտից մինչեւ իրիկուն խօսում էր այս դրացու, այն բարեկամի, ծանօթի ու անծանօթի հետ, բայց երկու լուրջ, վստահելի մարդ չէր գտնում, որ տանի, ներկայացնի դատարան եւ պատժել տայ յանձնաւոր վաշխառուին: Ամենքն ասում էին, որ գիտեն, տեսել են, համոզւած են Վարդեւանի լոյսի նման պարզ վճարումների ճշմարտու-

Թիւնը, բայց ինչ ինչ պատճառներով, վրէժինդրութիւնից վախենալով, չեն կարող մտնել դատարան եւ ճակատ ճակատի դիմաց բացատրել արդարութիւնը: Կային այնպիսիները, որոնք այրւած սրտով խոստանում էին Վարդեւանին այդ պարտականութիւնները, իսկութիւնը վկայելու պարտքերը կատարել, բայց դրանց էլ վստահել չէր կարողանում Վարդեւանը, քանի որ դրանցից իւրաքանչիւրը Գէորգ աղափ հետ ինչ ինչ դատաստանական վէճեր էին ունեցել եւ դատաւորները նրանց վկայութիւնները չեն կարող լսել:

Բայց ամենից գլխաւորը փաստաբանի կարիքն էր: Քաղաքի ամենայայտնի փաստաբանը պաշտպանում էր Գէորգ աղափ գործերը: Իսկ սրա դէմ հասկացող եւ անւանի մարդ էր հարկաւոր, որպէս զի խօսքը կարողանար առաջ տանել եւ դատաւորներին ստիպել, լսել Վարդեւանի վկաներին: Մի այդպիսի մարդ էլ հեշտ չէր ծեռք բերւի, տասը—քսան լիրայի հազիւ յաձն առնեին մտնել դատարան եւ պաշտպանել Վարդեւանին, իսկ Վարդեւանին, ո՞վ կը տար այդքան գումար: Գործն էլ այնքան չնչին գումարի էր, որ դրա համար ո՞չ ոք չէր զիջանիլ դատարան մտնել, թշնամութիւն ունենալ եւ հակառակութիւն ծագեցնել Գէորգ—աղափ, կամ մանաւանդ նրա փաստաբանի հետ:

Վարդեւանի վիշտը օրից օր սաստկանում էր: Գէդեւոնը կ:սրսից չէր կարողանում ազատել, իսկ խնամոնք զայրացած այդ անտարբեր դանդաղկոտութիւնից վեր առին եւ խեղճի նշանածին մի ուրիշի խօսք տւին, որը խոստացել էր, իսկոյն մի ամսից, նոր

պսակին հարսանիք անել: Այս բանը թէեւ ծածուկ էին ուզում պահել Վարդեւանից նրա իին խնամիները, բայց ասած է, „հաղի բերան—ջւալի բերան“, երբ կը պահւի այսպիսի գաղանիքը: Կարանը կանանցից ծածուկ լնել էր, վերաւորւելեւ բանը յայտնել էր ասուսնին: Երկու ամուսններ որքան խորին էին, առ չին գտել, ինար չէին կարողացել ստածել, որ ազատեն իրենց հարսնացուին եւ իրենց այդ սպառնացող վտանգաւոր խայտաւակութիւնը: Իէլեւոնին էլ գրել էին, որ անմիջապէս գործը Խոլնէ ու գայ. բայց Խշւառ գործաւորը երբ կարող էր գալ:

Ամբողջ Ապօթիև Մայիս եւ Յունիս ամիսներում բանել էր ԴՇԳԵԿՈՆ եւ ստակ չը ստացել: Կետք էր շարունակել գործը, որ կապալաւուները փող ստանային գանձարասրց եւ վարօնը բաժանէին: Հարկաւոր էր եւս մի ամիս դիմանալ, իակառակ դէպքում, եթէ Խոլնէր ու ինւասար, այն ժամանակ շարատանց բանւորը կը զրկւէր ամբողջ երնք ամսի աշխատանքից, իսկ արդէն Կարսի բանւորների ամենալաւ աշխատութեան օրերը գարնան զերջին եւ ամռան սկզբի ամիսներն են, դրանից զրկւիլը սովի մատնւելու իետ հաւասար է:

Թէեւ Վարդեւանը անճարացած էիմել էր խնամիներին եւ բացատրութիւն պահանջել բայց նրանք առանց այլ եւս ծածկելու, բողոքել էին նրա ու որդու անտարբերութիւնը, անզախ յայտնել, պարզել ճշմարտութիւնը: Նատ էր աշխատել համոզիլ խնամիներին, մինչեւ աշուն սպասելու, բայց զուր, նրանք հարսանիքը բռնեցին գալստեան առաջի շաբթուն: Հէնց հարսանիքի օրը հրաւիրած էր Վարդեւանը քաղաք, Մելրենց Դէորգ աղախ իետ դատը վարելու: Իսկ Գէորգ աղան իւր օրդուն ուղարկել էր գիւղ, որ քաւոր

լինի Վարդեւանի հարսնացուին, որին հարս տանում
էր վերջինի հակառակորդը, Գէորգ աղափ դրդմուն-
քով եւ օժանդակութեամբ։ Այս բանը տւելի սոսկալի
կերպով ազդեց Վարդեւանի վրա եւ նա թէեւ մի
քանի վկաներ տարած էր դատարան եւ ինքը նախա-
պէս լաւ պատրաստւած խօսելու ու պաշտպանելու,
բայց դատաւորները անողոք գտնւեցան, նրանք չը
զիջան լսելու թշւառին, հարստահարւածին ու զրկ-
ւածին եւ վճռեցին, որ Վարդեւանը վճարէ տասներ-
կու ոսկի Գէորգ աղախն, տոկոսովը եւ դատաստանա-
կան ծախսերովը։


—Վարդեւան աղբա՛ր, մի՛ յամառիլ, մի՛ հաստա-
կողութիւն անել, արի՛, ինձ լսիր եւ ես գործը
կարգի բերեմ, ասում էր սէհան փարտալով մի գիշեր
հովանոցում Վարդեւանին, բոլոր ճիգը թափելով
սրան համոզելու։ Դու ոքա՞ն յամառիս, ոքա՞ն հա-
կառակիս, պիտի քեզ վնասեն։ Դու խօ՞ գիտես, թէ
ինչ հաստատամիան է Գէորգ աղան, որ միտքը դըեց,
քեզ տնով տեղով կը փչացնէ։ Դու արի, ինձ լսի՛ր,
վնասի կէսից ետ դառնային էլ մեծ օգուտ է, արի ար-
տերդ տանք ու պրծիր։ Ես անպէս կանեմ, որ ելք
քու ձեռքը մնայ հողերդ, ելի դու ցանիր ու քաղիր
արտերդ, . . . :

—Ծո՛, անխի՛ղՅ, անիոգի՛, ի՞նչ ես ասում. ի՞նչ ես
խօսում, . . . : Նրա ուզածն ի՞նչ է, Գէորգ աղան ի՞նչ է
երազում. միթէ՞ նրա երեւակայութիւնը գիշեր ցերեկ
իմ արտերի հետ չէ։ Ես՞ իմ հողերս ծախեմ, այն էլ
թշնամուս յանձնե՞մ։ Կը տանիմ թուրքին կը տամ, մեր
Պանուկի աղախն՝ Նէխին կը տամ, թո՞ղ մեր Նինոցը
Նէխին փայ դառնայ, ես այդ անօրէնին ո՛չ թէ արտ, մի

Թիգ հող է՛լ չեմ տալ: Արդէն Շէյխը աչք ունի եւ ինձ
քանի՛ անգամ մարդ է ուղարկել: Թէ ծախեմ, Շէյխին
կը տամ, Թո՛ղ դուքս գայ Գէորգ աղախիդ աչքը եւ
ը տնկէ խեղճ մշակի երկու օրավար հողի վրա: Ես,
կեանքս ողջ, արեւս վրաս, գնամինձ Գէորգ աղախիդ ծա-
խեմ, նրան մարաբա դառնամ, մանր ու խոշորիս նրան
ստրկութեան մատնեմ, . . . : Դու, որ գնացել անձնա-
տուք ես եղել, քառասուն հոգւով աշխատումէք եւ մի
փոք կուշտ հաց չէք կարողանում ուաել, հերի՛ք չէ՞, ու-
զումես, որ ես է՛լ քու օրն ընկնեմ: Թէ քեզ քէհա՛ է
անել տւել, այդ բանից ուրախանում ես: Ո՛չ, ո՛չ, ես
փող կը գտնեմ, ես նրա պարագը կը տամ, ես իմ հո-
ղերս, քանի ողջ եմ, չեմ ծախել: Իմ մահւանից յետոյ,
ի՞նչ ուզում է, Թո՛ղ լինի: Ասա՛, ասա տեսնեմ, ահա՝
ինչքա՞ն ուզումես, փող վաստկիր, կարող ե՞ս սրանից
յետոյ քաղաքացուց ծախածդ հողերը ետ առնել: Թէ
կուզես տասն անգամ աւելացրու ծախածդ գնից, տես
քեզ մի բուռը հող ետ կըտան: Գիւղի մէջ որքան որ
բերրի արտ, շնորթին մարգ կաը տիրեցին. հայ,
Թուրք, բոլորի աչքը մեր հողերի վրա է, էլ մէկ ան-
գամ ձեռքից հանելուց յետոյ, ե՞րբ կարող ես նորից
հողեր ձեռք բերել: Ծի քանի գիւղացի կան, որ ունին
իրենց հողերը, բայց ե՞րբ կը ծախեն: Անխողնութիւն
չէ՞ նրանց հողին աչք տնկելը: Զէ, քէհա՛, աւելի լաւ է,
որ ես ինձ սպանեմ, ես իմ մանր ու խոշորին դնեմ դա-
նակի տակ մորթեմ, քանթէ մի թիգ հող ծախեմ: Հո՛ղ
չը կայ, սահմանը քեզ յայտնի է, ամբողջ Սազում մի
թիգ բաց հող չը կայ, իսկ մենք այս պապենական
դաշտից չենք կարող դուրս գալ: Զինգ ոսկով նա ինձ
գերեց ու ստրկացրեց, հինգի փոխարէն տասն ու հինգ

լիրա է ստացել, տասն եւ հինգ լիրափ էլ ձեռքում
վճիռքն առած, ուզում է տունս տեղս բրիշակ անել,
հողերս տիրել, . . . Ո՞չ, ո՞չ, այդ բանը նա չի տեսնիլ, . . . :
Ես նրա փողերը կը վճարեմ, կը տամ, չեմ թոյլ տաև
որ նա անուրդի հանէ իմ կալւածները. . . . :

VII.



ութն էր, գիշերային խաւարը առանց լուսնեակի
պատել էր երկիրը: Երկնակամարի կապուտակը մթնա-
գունել էր եւ աստղերը աւելի բոցապայծառ շողշո-
ղում էին: Աստղերի միջից պարբերաբար ասուպներ
գլորում էին զանազան ուղղութեամբ, յետքից շողա-
լէն գից բաց թողնելով, որոնք խսկոյն անհետանում էին:
Թէեւ զեփիւռը մեղմ սուլումներով սահում էր դաշտի
երեսով, Սազի մակարթակով, բայց այնքան թոյլ էր, որ
ուռիների ճիւղերն անգամ չէին թէքում եւ հանդերի
կիսահաս ցորենի ու գարու կաթնազեղուն հասկերը
հազիւ ճոճում էին: Լուռ էր երկինքը եւ մնջած եր-
կիրը, մարդ ու անասուն, մինչեւ անգամ գիւղացու
միակ հաւատարիմներն անգամ ուժասպառ մրափում
էին, երկար օրւայ տեւողութեան մէջ տանջւած մար-
մինները, կարծ գիշերում հանգստացնելու համար:
„Հոգնած—քնածն ու մեռածը տարբերութիւն չունի”,
ասումէ շինականի առածը:

Բայց հոգնածութիւնը կարող է ընկճել զօրակա-
նին, դադրածութիւնը կարող է թուլացնել մշակին,
քունը կարող է թմրեցնել գիանականին, իսկ ո՞չ մի
ոյժ չի կարող մարել սիրոյ կայծերը, որը քա-

նի առաջ է գնում, բորբոքում է, որքա՞ն արգելքների է պատահում, արծարծում է, ինչքա՞ն ճնշման է ենթարկում, այնքան զօրեղանում է, եւ նրա համար քունն ու հանգիստը կարւումեն, զօր ու գիշերը հաւասարւում: Այդպէս էր Մարգարտի վիճակը Մանուկի որդու Մնացականի հետ: Կարծես թէ Մնացականը աշխարհի երեսին միայն Մարգարտի համար էր մնացել եւ Մարգարտից զոկ, է՛լ աղջիկ չեխն նկատում Մնացականի աչքերը: Արգելւած պտուղը, անհասանելին, դժւարինը միշտ իւր աստիճանով ամենաքաղցը եւ ցանկալի դառնալով, իդէալի ձեւ է ստացել եւ ծգել, քաշել է մարդկանց սիրտը եւ բարձրացը ել, թոփչներ է գործել տւել: Աշխարհի վրա Մնացականի սիրոյ աչքերով ու կարծիքով Մարգարիտի նման գեղեցիկ, քնքոյշ, բարեմասնութիւններով եւ ազնիւ հոգւով ուրիշ աղջիկ չը կար, իսկ Մարգարիտի հոգեկան աշխարհը բովանդակում էր ամբողջապէս Մնացականին: Վարդեւանի խստութիւնը, անողոքութիւնը եւ բռնակալութիւնը միայն սաստկացը ել էր սիրահարների սէրը, նրանք է՛լ ջերմ սիրով կապւել էին եւ աւելի հետամբռտել իրար հետ ժամե՛ր, երկար ժամե՛ր անցկացնելու, վշտակցելու եւ մխիթարւելու:

Մէջ գիշեր չեղած սիրահարները դուրս էին գալիս և այնպէս վարժել էին որոշ ժամերին, որ Մնացագանը դեռ չը հասած որոշւած վայրին, Մարգարիտը լրւամուտից դուրս էր գալիս նրան դիմաւորելու: Օրից օր կարծես գեղեցկանում էր Մարգարիտը եւ տխրութեան քողը, արտասւախառն աչքերը նրան աւելի բոցավառում ու քնքշացնում էին: Վիշտը նրան լեզուն ճկունացը եր, տանջանքը նրա մտքերը խո-

բացրել, իեծեծանքը նրան բլրու էին դարձրել եւսէ-
ը բանաստեղծ, այնպէս որ նա առանց կանգ առնե-
լու ասում էր, խօսում էր, երգում, պատմում եւ իւր
գուրգուրանքով քաջալերում ու միսիթարում Մնացա-
կանին: Իսկ վերջինս դիւթւած, հոգւով դրախտ
փոխւած, առիւծ դարձած, բաժանւում էր իւր սիրա-
կանից, վստահ լինելով, որ նա իւր սիրեկանի շնորհիւ
աշխարհի ամենաբարեբաղտ արարածն է: Մնացականը
իւր տանջանքը երջանկութիւն էր համարում եւ իւր
սիրականի համար ո՛չ միայն տանջւիլը, այլ կետնքից
զրկւելն անգամ՝ երանութիւն:

Թէ ի՞նչ էին զգում եւ թէ ի՞նչ աստիճանի բաղ-
տաւորութեան մէջ էին երկու սիրահարները, կարող են
միայն այդպիսի ջերմաջերմ սիրոյ հարւածներն ըն-
դունողները ըմբռնել բայց այդ անմեղ սիրոյ վա-
յելը շատ երկար չը տեւեց, . . . : Մի գիշեր Վարդեւա-
նը երբ զբաղւած էր իւր մտքերով, երբ անքուն
մտածում էր հնար գտնել եւ ազատել իւր ընտանի-
քը, իւր օջախին սպառնացող մօտալութ սոսկալի
հարւածից, նկատեց Մարգարտի սողալով դուրս գնա-
լը, . . . : Հայրը հետեւեց իւր անմեղ աղջկան, ինչպէս
որսորդը եղնիկին, կամ բարակը նապաստակին եւ
աղլէսի նման հեռուն պազեց սպասելով տեսակցու-
թեան հետեւանքին:

Բայց բացի անմեղ տրտունջներնից, բացի իրա-
ւացի բողոքներից, ի՞նչ կարող էին ունենալ անարատ
հոգիները: Գանկատում էին իրենց անողոք վիճա-
կից, իրենց դաժան բաղտից եւ այդ գանգամները
սրտակէզ հառաջներով դէպի վեր բարձրացնում,
դէպի երկինք ուղղում եւ բոցափայլ աստղերի վրա

նախանձալի հայեացք գցելով, դողդղում էին, երբ մի որ եւ է ասուալ սահում էր երկնքում, գլորւում եւ յետքի գիծն անգամ աչքի նկատելի դառնալու չափ չէր մնում, այլ իսկոյն անհետանում էր եւ չքանում:

—Արդեօք այդ գլորւող աստղը իմը չէ՞ր, Մացակ ջան, ասում էր Մարգարիտը հառաչելով, որ այնպէս թոյլ երեցաւ ու մարեցաւ, կարծես գետնի տակ թաղւցաւ, . . . :

—Քան չունի՞ս, Մարգարիտ ջա՞ն, գէշ բան ի նչի ես մտածում, ի՞նչի պիտի մարի քու աստղը ու թաղլի, դեռ նա շատ շատ է բորբոքելու եւ բոցափայլելու ինձ համար, Մացակիդ համար:

—Սյո՛, Փլիֆլալու է, Փլիֆլալու եւ հանգչելու: Ո՞վ մեզի կը տայ բոցերով ու շողբերով ասող: Լաւ աստղ որ ունենայինք, քաղաքում կը ծնւէինք, ոսկու ու գոհարի մէջ կը թափախւէինք եւ բաղտաւորների նման կը ցոլայինք, շաւղ կը տայինք, բայց պարտքնտէր մշակի աղջիկն ու մարաթափ որդին ինչի՞ պիտի բոցերով փայլատակին, . . . : Սեւ սուգն էլ մեզի շատ է տեսել անողըրմ բաղդը, լացն ու կոկիծն է մեզ բաժին ընկել, . . . :

—Ես մեղաւոր ե՞մ, հոգի՞ս, որ մարաթափ զաւակ եմ դարձել, ես մեղաւոր ե՞մ, որ հայրս չը կարողանալով պապինական միւլքերը պաշտպանել, տարել ծախել է Եզիսին եւ ինըն էլ նրա մօտ ստրուկ է գարձել: Զօրս մեղքի համար ե՞ս պիտի տուժե՞մ: . . . : Զօրս սխալանքի, թէ յիմարութեան համար ի՞նձ պիտի դատապարտեն, քեզ գրկիցս խլեն, մեր սերը խեղդեն. . . .

— Բանն այն տեղ է, որ իրանք գործել են սխալը՝ իրանք իրենց աններելի յանցանքով գլորւել են խորխորատը, վրէժները իրենց նենգամիտ հակառակորդից ու թշնամիներից չեն կարողանում լուծել, եկել մեզ են տանջում, մեզնից են ուզում, կարծես, վրէժները լուծել: Ո՞վ ասաց քու հօրդ, որ օդան ու ախոռը շինելու համար, երթայ բաղաք, Նելիսից հազար դուրսուշ պարտք անէ, թէ ի՞նչ է Նինոցի մէջ գլուխ ցոյց տայ, խօսեցնել տայ, թէ Մանուկը մի այնպէս օդա, մի այնպէս ախոռ շինեց, որ մեր գիւղում նմանը չը կայ, . . . : Բայց յետոյ մէկ օդա ու ախոռի համար մէկ օջախ կործանեց, պապենական միւլքերը Նելիսին յանձնւեց: Ահա՛, այսօր մեր տունն էլ այդ օրը չէ՞ ընկնելու: Գարանս հարիւր անգամ ասաց.—Վարդեւան, մենք մի լուծ գոմշի կարիք չունինք, մեզ պետք չէ, որ դու պարտքով լրացնես գութանիդ պակասորդը: Համբերի՛ր, Աստւած երբ գործիդ յաջողութիւն կը տայ, կալերդ լիբ լիքը բարով կը լցւի, յաջող կը ծախս ամբարիդ ցորենը, փողը գրպանումդ կը լքցւի, այն ժամանակ մէկի տեղ երկու լուծք առ:— Բայց չէ, կնկանը խօսքը տղամարդը ինչի՞ պիտի լսէ: Լուծք ծախսւեց, միւս լուծն էլ հակառակի նման քաղցից կոտորւեց, կալը դատարկեց պարտատէրը, կթանի եղն ու պանիրն էլ վրա գնաց, բայց անկուշտ պարտատիրոջ ճանկից չը խալսեցանք:— Ես առանց գութանի չեմ կարող ապրի—ասում էր մեծ մեծ կոտրտելով հայրս, բայց այժմ գութանից չոկ միւլքերն էլ պիտի տայ, . . . :

— Օֆ�', սրտի խորքերից հառաչեց Մնացականը, որին խսկոյն արծագանք տւեց Մարգարիտը եւ լռե-

ցին երկուսն էլ մի պահ. . . . : Բայց Մնացականը հօրն ու աներոջ սխալը այնքան մեծ չը նկատելով, չը կարողացաւ սրտում դատաձը չարտայայտել իսկոյն իւր սիրեկանին:

— Բայց նրանք, քու ցոյց տւածի չափ էլ, մեղաւոք չեն, առանց ախոռի ու օդաի ապրելն անհնար է, վնասակար է, պետք էր դրանք շինել. իսկ առանց գութանի գիւղացին միայն չոր հաց կարող է կրկտնել եւ միշտ պարտքի տակ տոկալ: Այս ահագին խարացին ու փէշքեաշներին միայն գութանով կարելի է բաւարարութիւն տալ:

Մարգարիտը չը պատասխանեց եւ լռելեայն գրկւեցին երկուսն էլ, թէկն տւին պատին: Նրանց նստարանը քար էր, նրանց հենարանը կոշտ քարի պատը եւ բազուկներով իրար գրկած, անմոռունջ ու լուռ իրենց վիշտն էին արտայայտում եւ այն լռութիւնով շատ ու շատ մտքեր էին փոխանակում, քան թէ բառերով:

Իսկ Վարդեւանը արձանացած, դարանի մէջ տարածւած, լսեց նրանց ու դառն մտքերի մէջ սուզւեց: Սկզբում շատ վրդովւեց, երբ լսեց ծնողների արարքների քննադատութիւնը, ուզեց խզել այդ խօսակցութիւնը եւ իսպառ բաժանել սիրականերին, բայց մտածելով ըմբռնեց նրանց ֆշգրիտ նկատողութիւնը, հոգւով խռովեցաւ, դառնացաւ եւ անզգայանալով թմբեց, չը կարողացաւ անգամ սթափւել, . . . :

Թմբութիւնը այն աստիճանի ծանրացել եւ թուլացրել էր Վարդեւանին, որ նա մինչեւ անգամ չըզգաց, թէ ինչպէս սիրահարները բաժանւեցին եւ վերադարձան իրենց ըները, խոստանալով հետեւեալ օրը

ժամադրած վայրը ներկայ գտնւել եւ իրար պարզել
օրական անցկացրած դէսլքերը: Եթիւ սթափւեց Վար-
դեւանը եւ նրանց չըգտաւ իրենց տեղում, սկզբուն
սռսկաց, թիչ թիչ եթիւ համոզւեցաւ, որ նրանք արդէն
չը կան, շտապեց տուն մտաւ եւ Մարգարտին իւր վեր-
մակի մէջ պլլած, պառկած նկատելով, հանգստա-
ցաւ, գնաց ինքն էլ տարածւեց իւր անկողնում: Բայց
խաղաղ քունը չը մօտեցաւ Վարդեւանի աչքերին եւ
նա մինչեւ լոյս ալէծուփ թափառեցաւ երեւակայու-
թիւնների մէջ, կամայ ակամայ զիջաւ, ընկնւեց հան-
գամանքների առաջ, . . . :

Օրերը իրար եւեւից գլորւում էին եւ ցերեկը
աստիճանաբար երկարում: Յորդ անձրեւները ողողե-
ցին եւ սար ու ձոր դալարներով ծածկեցին, այնպէս
որ տարին մէծ հունձ էր խոստանում: Մշակը, հողա-
գործը հրճուում էր դիտելով իւր քրտնաթոր վաստա-
կով ցանած արտերը: Այնպէս ցողուն էր տւել ցորենն
ու գարին, այնպէս լիք հասկեր էին տւել ու լցւել
որ անցորդի քէյֆն էր գալիս եւ զննելուց չէր կշտա-
նում: Վարդեւանի արտերը մէծ—առատ բերը էին
խոստանում, այնպէս որ ընկնւած ու միջավայրի
առաջ խոնարհած երկրագործը, դարձեալ ձգւեցաւ, նո-
րից հպարտացաւ, կրկին երազեց իւր անկախութիւնն
ու ազատութիւնը:

—Մի քառ' սոմար ցորէն, պարտքից էլ կը պրծ-
նիմ, խարչից էլ: Գէդեւոնիս թերեմ, այնպէս աղջիկառ-
նիմ, այնպէս հարսանիք անեմ, որ խնամիներիս սիր-
տը ճաքի:

Վարդեւանի ոտքը արտերից չէր կտրւում,
թէեւ մօտկամ էր մտել եւ ներկ էր վարում դրացինե-
րի հետ, բայց ազատ ժամանակները անցնում էր հան-

գով, հասնում էր իւր արտերը, եւ նրանց կողքովանց-
կենալիս այնպիսի վեհ դիրք էր բռնում, որ կար-
ծես ինքն ստեղծած լինէր այդ բոլորը:

—Ախ՛, մէկ քաղէի, մէկ կալս կրէի այս բարին, ես
ցոյց կը տայի Գէորգ աղախն, թէ ի՞նչ էնշանակում
արտերս գրել տալը: Ի՞նչի չունենայ մարդ տասը,
տասնը հինգ ոսկի, տանէ առաջը գցէ ու ասէ.—Նո՛ւն,
ա՛ռ, այս է քու ուզածդ, ա՛ռ կե՛ր, այս էլ կե՛ր, Աստ-
ծու կը ակն էլ: Հինգ ոսկու փոխարէն տասն ու հինգ
ոսկի կերել է, չէ կշտացել, աչքը դրել է արտերիս:
Անիծւած, փողի խնդիր չէ, փո՛ղ չէ ուզածդ, ա՛ռ,
տասն ու հինգ ոսկի էլ եւ թո՛ղ քեզ ու քու ընտա-
նիքի համար այդ փողը դեղի ու դեղտուրի բաժին
դառնայ: Իմ դառն քրտինքով դադածս, իմ մանր ու
խոշորի աղի արտսունքով ժողովածը, ի՞նչ սրտով
պիտի լափես, . . . : Բան չեմ ասում, փուշ դառնայ,
քուկդ մնայ, յաւիտեան դեղի դիմես, ճար չը գտնես:
Հալբաթ, որ ամեն հինգ ոսկու փոխարէն, եթէ երեսնա-
կաններ ստանան, նրանց ոսկին չի տեղաւորիլ ո՛չ ամ-
բարներում, ո՛չ քիլարներում եւ աշխարհի կը տիրեն
իրենց փողով: Բայց այդ ստակը, այդ հարստութիւնը
իրենցը չէ, մերն է, մեր, մշակներիսն է, մեզնից են
խլել, գջլել ու դարսել. :



Արշալոյսը պարզւել, արեւն արդէն հորիզոնից մի նիզակաչափ բարձրացել էր, Նխոցի նախիքը իեռացել, հորթերի—կովերի բառանջոցը, ոչսարների—գառների մայոցը, այծերի—ուլերի կտկտոցը դադարելու վրա էր, երբ Վարդեւանը մալերի ետեւից Գարանին վերադառնալը նկատելով ասաց.

—Այդ ոչուփուչիդ խելքը գլուխը բեր, ասա՛, որ եթէ նա մէկ էլ գիշերը դռնից դուրս գայ, Մանուկի լակոտի հետ տեսնեի, երկուսին էլ մի մահակով շան սատակ կանեմ, . . . :

Գարանը մի այնպիսի կերպով ծամաճուց դէմքը, որ կարծես ուզում էր ասել,—մա՛րդ, գժւե՞լ ես, ինչե՞ր ես խօսում, ո՞վ. . . ի՞նչ է պատահել եւ ամբողջ մարմնով մի հարցողական նշան դառնուլով ամուսնին ոտքից գլուխ զննեց, հայեացքը քննեց և նրա դէմքից ասածների շարունակութիւնը բոպէական կերպով կարդալուց յետոյ, ներս մտաւ: Վարդեւանը մի խոժոր հայեացք նրա ետեւից ուղղելով ասաց:

—Անզգա՞մ, իբրեւ թէ չե՞ս իմանում եւ ջանում ես անմեղ իրեշտակ երեւել ազքիս եւ ինձ մոլորեցնել:

Արեւը աստիճանաբար բարձրանում էր, կիզելով լեռ, դաշտ, հետզիետէ սաստկացնելով ջերմութիւնը: Գիւղացիք արդէն մտել էին մարզերը խոտերը հնձելու եւ մեծ ջանքով գերանդին շարժում,

յուսալով իրենց բերքով ո'չ միայն նոյն եւ հետեւեալ նմեռը իրենց անասուններին կերակրել այլ մինչեւ անգամ մի մասն էլ ծախելով կարիքները հոգալ: Հարս — աղջիկ, պառաւ թէ դեռահաս, կանայքն անգամ մասնակցում էին հնձին: Ուրախութիւնը ընդհանուր էր: Խուրծ կապողները թուշկոտելով հասնում էին գործի եւ դաշտի մէջ կարգաւ բլուրների նման բարձրացնում էին քաղւած խոտի դէզերը: Յուսահատ մշակը ոգեւորւած առատ բերքով, ոչ միայն քրտնաթոր վագում էր գործին, այլ ընկճաւած, մորմբած սրտերը ուրախութեամբ զեղւած, դուրս էին մղում հոգու խորքերից զգացածները օդը թնդացնող երգերի ձայներով: Մըմունջները, հառաջանքները արտայայտելը արգիլած էր, իսկ ցնծութիւնները սանձելու կարիք չունէին մշակները: Միթէ կարող է մշտաչարչար հոգին յուսալի ըոպէներում զսպւել, մանաւանդ դեռահասի կրծքում, որը յուսախաբ բաղդի տատանմունքներին չէ մատնւել եւ չէ փորձւել: Երբ որոտընդոստ ձայնով երիտասարդներն ու պատանիները զնգզնգացնում էին ամբողջ դաշտը եւ նրանց արձագանք էին տալիս հեռաւոր լեռները, մի փորձառու ծերուկ հնձւոր ասաց.

—Արեւը սաստիկ կծում է, երեւի անձրեւ եւ յորդ անձրեւ է գալու: Աղջիկնե՞ր, թան չունի՞ք, կամ մի թաս մածուն չունի՞ք, տւէ՞ք, չալխամա անեմ ու խմեմ:

Մերուկին տւին պահանջածը եւ շատ չանցած սկսեցին մոայլ ամպերը Գեավուր—Գաղից դէպի հարաւ շարժւել եւ շուտառվ ծածկեցին հորիզոնը: Մոայլեց երկինքը, կուտակւեցին ամպերը, բայց արեւը

կարծես բոլոր ոյժը ամփոփած, ուզում էր աներեւոյ-
թացնել այդ արծաթափայլ երկնային քուլաները եւ
անընդհատ ամպերի ճեղքերից տարածում էր իւր
ոսկիափայլ ճառագայթները: Մէկ մէկ կաթկթում էր
թաթաւը, տեղ տեղ հոսում էին անձրեւի լիք լիք
գնտիկները եւ քամին ընդհատում էր նրանց: Յան-
կարծ նորից դիմուեցին ամպերը, վայլատակեց, մռայ-
լեց եւ սոսկալի մունջիւնսերով որոտացին ամպերը,
սարսափ սփռելով կենդանի աշխարհում: Կաթկթեց
թոնը, ընդհատւեց, յորդ սահեց եւ անձրեւի հետ վար
թափւեցան կարկտի խոշոր հատիկները: Եւ ինչ սոս-
կալի կարկուտ, ամեն մի հատը կակալի, ձւի չափ,
կապարի նման ծանր, սայթքում եւ դիպածին ջարդ
ու փշուր էին անում: Ամբողջ ժամ չը տեւեց, բայց
դաշտումն էլ բարի չը թողեց, ցանքսերը հողի հետ
հաւասարեց, տրորեց ու փշուրեց:

Ամբողջ Սազը սպիտակ սաւանով կարծես ծած-
կւեց, դաշտը ողողւեց ջրով ու կարկուտով: Հան-
դում գիւղացիք պատսպարւեցին իրենց խոտերի
դէզերի մէջ, բաց օդեայ մնացողներից շատերը, մինչեւ
ապաստանի հասնիլը, վիրաւորվեցին կարկտի հատիկ-
ներից: Կարկուտի դադարելուց կէս ժամ անցած դեռ
ոչ ոք սիրտ չէր անում դուրս գալ խոտերի դէզե-
րի միջից, իսկ այն աեղից դիտելով արտերի սոսկալի
վիճակը սկսեցին մօրմոքալ: Նխնոցի արտերը մեծ
մասամբ անխնայ տրորւեցին այդ անողորմ հարւածով
եւ կենդանի զոհւեց թշւառ շինականը, այնպէս որ
ապրուստի միջոցը կտրւեց եւ ամենքն էլ սկսան ան-
միջապէս ողբալ իրենց զարիուրելի վիճակը: Յուսա-
հատւեցին ծերերն ու պառաւները, լքան դեռահաս-
ները եւ տխրութիւնը պատճց բոլորի սիրտը:

Տղմի, ցեխի ու ապականութեան մէջ էլ չը լարելի աշխատել, դատելու էլ սիրա չը մնաց: Առին երանդիներն ու գործիքները եւ թախժայի դէմքով, ամք քայլերով ուղղւեցին գէպի գիւղ լոփիկ, մնջիկ: Յուսահատ, փորձանքը այնպէս էր ազդել, այնպէս վհատեցրել եւ կեանքը գառնացը թշւառ հողագործի, որ չապրուներին երանի էին տալիս իրենց մոքում: Վարդեւանը այնպէս էր թուրացել եւ մոլորել որ կորցրել էր խելքը, միտքը, չը իմանում, չք գորում շուրջը անցած—կատարւածները: Երբ աղիողորմ հառաջներ էր բարձրացնում ու շնչառպառ տքում, մօտեցաւ նրա հարեւան Մանուկն ու ասաց.

— Հա՞ն, Վարդեւան աղքա՛ր, այս ելքը դե՛րն արին, այս է՛լ վաշխառռներն արին, : Ասուած մեզնից ձեռք է՛ քաշել ձեռք, : Եթէ Ասուած չի կամենում մեր գործի յաջողութիւնը, ես ի՞նչ անեմ, դու ի՞նչ անես: Բացի տանջանքից, բացի սովամահ ու ցրտահար չարչարանքից, ուրիշ բաժին մեզ չէ թողել: Դու ի՞նչ ուզում ես, արա, որ կողմն ուզում ես, ձգւի՛ր, նա, որ չը կամենայ, մէկ էլ տեսար մի կողմից—թուժք—գլխիդ զարկեց ու տեղոց տեղ քեզ չորցըց: Ես իմ կամքովս մարաբանայ, քու կամքովդ դու Գէորգ—աղախ ճանգն ընկար, : Ո՛չ, ո՛չ, նա մեզ պատժելու համար գլուքեց այդ բացերի մէջ եւ պիտի մնանք, քանի որ նրա բարկութիւնը չէ իջել. . . . :

— Է՛հ, ինչ ե՞ս դուրս տալիս, ինչ ե՞ս յիմար յիշմար բարողներ կարդում: Նա մեզ խելք է տւել եւ ազատ կամք, որ մենք մեր գործերը կարգադրենք ու կառավարւինք: Մենք, որ յիմար ենք, մենք, որ տգէտ

ենք եւ գլորւումնք անդունդը, Նրա դէմ էլի ի՞նչի
մեղանչենք եւ մեր բոլոր տաջանքները նրան վերա-
գրենք: Եթէ դու փառասիրութեանդ համար չը գլոր-
ւէիր Շէյխի դուռը, պարտք չառնէիր, ինչի՞ այսօր
պիտի նրա մարաբան դառնայիր: Եթէ ես, չագահա-
նայի, գութանս մեծացնելու չը ձգտէի, համբերէի,
ի՞նչի պիտի Մեղրենց լակոտները ինձանից հինգ լի-
րաի փոխարէն տասն եւ հինգ լիրա առնելուց ջոկ,
տասն եւ հինգ լիրաի էլ վճիռք ծեռք բերէին: Մենք
միշտ մեր խելքի ծայրից ենք կործանւած եւ պիտի
կործանւինք: Եթէ Աստծու մեզ տւած շնորհքը խե-
լացի կերպով բանացնենք, ինչի՞ պիտի յուսահատ
օրերի մէջ մնանք: Դեռ հինգ տարի առաջ Ամերիկա-
կան ընկերութեան մարդը եկաւ, խնդրեց, աղաչեց,
համոզեց, որ մենք տարեկան մի թեթեւ հարկ տանք,
մեր արտերը, կարկտի ու մկի դէմ ապահովենք: Ես
այս տարի քիչը քսանը հինգ սոմար ցորէն ունէի
վերցնելու: Եթէ մի սոմարի գինը, մի լիրա ամերի-
կացուն տայի, այսօր կը գնայի, նրան կը բերէի եւ
արտերիս վիճակը ցոյց տալով, քսանը հինգ լիրաս
կանխիկ կը ստանայի: Բայց մենք իրար աշելով նո-
րութիւնից փախչում ենք, պապերի նամբից դուրս
չենք գալիս եւ այս տեսակ դէպքերում միշտ մեղքը
բարդում ենք մեր բաղտի վրա:

— Նրանք էլ ամեն բան խոստանում եւ ոչինչ չեն
տալիս, բոլորը խաբէութիւն է: Մակարեանը կեանքը
ապահովցուցած է եղել երկու հազար լիրաի, ահա
հինգ տարի է ժառանգները մի ստակ էլ չեն ստացել:

— Այդ սխալ է, նա տասը տարի շարունակ վճա-
րել է ապահովավճարը, վերջին տարին տւած չէ եղել

յայտնի բան է, չէին էլ տալ: Թող վերջին տարւանը վճարած լինէր, տեսնէիր, թէ ինչպէ՞ս պիտի լւլւային նրա աղջիկները այդ հազարների մէջ: Մերոնք, անհամբեր կովի նման, կաթը կը տան, կը կթւին, երբ կովկիթը կը լցւի, կից կը տան ու կաթը կը թափեն: Խնձ եանըգեանը ասաց, որ եթէ ուզենամ, ո՛չ թէ մինակ կարկուտի, մուկի, այլ մինչեւ անգամ հրդէի դէմ կարող եմ ապահովել բերքս, մինչեւ տուն կրելս: Արդէն քրդերը, թրքի լամուկները քանի՛ քանի՛ անգամ արտերիս կրակ են տւել, դէզերս են վառել եւ կալերս են մոխիր դարձրել: Այն որ պիտի տանք աշարին, էղնամին, պահապանին, քրդին ու շէյխին, իրիցուն ու միանձնին, տանք մը փոքր էլ ամերիկացուն եւ հանգիստ ապրենք, սրտերս խաղաղենք, ի՞նչ կորուստ կ'ունենանք: Բայց չէ, մէկ որ մարդութամահ է, մէկ էլ որ պապս չէ արել, դրացիս չէ արել, ես ինչի՞ պիտի անեմ:

— Տա՞նք, տա՞նք, բայց մեզ ի՞նչ պիտի մնայ, որ տուն պահենք, մանը ու խոշոր կերակրենք, հագցնենք եւ ցանքսի էլքաժին պահենք: Թողնում են, որ ազատ շունչ առնենք, եւ մի բան ետ գցենք սեւ օրւան չը մնալու համար:

— Այդ ասա՛, այդ մասին գանկատւէ, տես, դրա դէմ բան չունիմ ասելու: Օրէնքով մեր բերքի տասից մէկն ենք տալու աշար, միւլթէզիմը հնգից մէկը վեր է առնում ու էլի չի կշտանում: Դեռ հլա պիտի կերակրենք միւլթէզիմի հինգ տասը ծառաներին եւ ծիաններին ամիսներով: Էղնամը ամեն անասունից պիտի տանի երկու դուրուշ, երեք դուրուշ, տանում են հինգ—տասը, էլի աչք են տնկում մեր մատակների, հոր-

Թերի եւ գառների վրա: Հազար խնդիր առոք, թէ հայրը մեռել է, եղբայրդ կորել է, ծնւած երեխան իւր երրորդ ամսում մահացել է, հարկահան չի լսում, յիսունը հինգ դուրս շի փոխարէն վաթսուն է պահանջում ամսն մի մեռած, թէ կենդանի արարածի համար Կաշիդ դուրս գայ, տանջւի՞ր, այրւի՞ր եւ մորմոքա՛, մինչեւ չը տաս, դռնիցդ չի հեռանալ տնհոգի պաշտօնականը: Քէհախն տո՛ւր, հոգեբաժինը տուր, տո՛ւր ու տո՛ւր: Հապա վաշխառո՞ւն,.. մէկին տասը տո՛ւր....

— Տուր ու տուր, հիմի էլ ապահովութեան համար ամերիկացուն տո՛ւր,

— Չես տալ, չես ապրիլ կը տաս, սոված կը մնաս, տկլոր կը մնաս. . . .

Գարձեալ լրեցին դրացիները, դարձեալ մնջեցին, մտքերով խորասուզեցան վշտերի դաշտը եւ ընկղ մեցին: Միայն շնչառութիւններն եր լուռում եւ երբեմն երբեմն էլ տխուր ու թոյլ հառաջում էին: Վերջալոյսի վերջին ճառագայթներն էլ թռան Սազի դաշտավայրից, Փալան—թէօեանի լանջերից ու գագաթներից եւ արեւն էլ ելիցայի սարերի եաւեւը ընկղմելով, խաւարի ու մթութեան մէջ թողեց վշտահար եւ յուսակտուր Սազեցի մշակներին. . . .

IX.

Ելյոյսը ըոլսրովին կտրւել էր: Արդէն մի ամբողջ շաբաթ անցել էր կարկտի օրից եւ արեւի ջերմութիւնը, գիշերւայ ցուկը, հողի ոյժը չէին կարողացել փշրւած եւ տափկացած ցորենի ու գարու եղէ-

գները բարձրացնել: Մինչեւ անգամ որպէս խոտ, կամ դարմանցու չէր կարելի քաղել արտերից, որոնք օրից օր փչանում էին: Գիւղացին մնացել էր ծեռքերը ծալած, ո՞չ հորում ցորեն, ո՞չ ամբարում ալիւր եւ ո՞չ էլ տաշտում հաց ունէր: Սովոր սոսկալի պատկերը իւր քառմնեցուցիչ տեսարաներով նկարւում էր շինականի մաքում եւ նա դոդդում, սարսուում էր մտածելով չարատանջ աշնան յաջորդող տաժանելի ձմռան մասին:

Պարբերաբար քաղցին ու տվյալութեան դիմադրող հողագործը վարժւել է չարքաշ կեանքին եւ ամեն միջոց գործ է դնում միշտ, մի կերպ եօլա գնալու ներկայ տագնապում, բարեյաջող ապագայի յուսով: Եթէ ցորեն—գարին անգութ հարստահարիչները, վաշխառուները եւ կամ բնութեան աւերիչ ծեռքը խլում, փչացնում է, շինականին մնում է իւր անատունների նման բոյսերով, վայրի խոտերով եւ սրանց արմատներով կերակրւել: Խնչպէս մուկը կտրում է, փչացնում է մարդու դառն աշխատանքով ցանած ու աճեցրած ցորեն ու կրում իրեն համար գետնի տակ այս ու այն կողմն ամբարում, ձմռան բքին իրեն պաշար պատրաստում, այդպէս էլ մարդիկ բահ ու փետառ ծեռք, առած ընկնումեն հանդի մէջ մկների ժոժողոված ատոլն ու կոճղէզը իրենց տունը կրելու: Բայց այս բոյսերով, որքա՞ն էլ առատ լինին, ապրելն եթէ անհնար չէ, անտանելի է: Ելի պէտք է աշխատել ընկել դէս դէն եւ քիչ ալիւր, ցորեն, կորկոտ ծեռք ձգել եւ քից շատից տան թթխմորը գոնէ չը պակսեցնել, առանց որին հայ գիւղացին չի կարող ապրել:

Արդէն այս տագնապալի օրերում շինականին իր

ամբողջ անցեալը, իւր լաւ եւ վատ գոյներով ներկայանում է երեւակայութեամբ: Այդ բովը նրան քաջալերում է եւ թոյլ չի տալիս քաղցը կեանքից ձեռք քաշելու, ապագայի քաղցրագոյն յոյսով: Ցիշում է, որ նա ունեցել է բարեյաջող տարիներ, լիքն են եղել հորերը ցորենով եւ քիլարները բարով: Բաց է եղել նրա պահեստը ո՛չ միայն անցորդի, աղքատի, այլ մինչեւ անգամ սարի այս ու այն դիու ազգակիցների համար, որոնք իրեն պէս պատահարներից ընկնած, եկել ու պարկերը լքցնելով առատութեամբ տարել ու ապրել էին: Ցիշում է, որ ինքն էլ փոխադարձաբար գնացել է, բերել ու սեւ օրերը անցկացրել: Աւելի եւս այդ օրերը յիշում է, թէ ում փոխ է տւել եւ ում ցորեն, կամ մի ուրիշ նիւթ պարք ունի: Նեղ օրում պահանջները ուզելը ամօթ չէ, պարտապանը պահանջատիրոջ կարօտութիւնը աչքի առաջ ունենալով, ծգտում է վերադարձնել պարտքը եւ փոխարինել բարիքը:

—Վարդեւան աղբա'ր, ասաց մի օր նրա հարեւան Մարուքը, թէ կարելի է, թոխլիների գինը տաս, գիտես եւ մեր հալը: Գիտեմ, որ քու էլ միջոցդ շատ լաւ չէ, մանաւանդ որ թոխլիներն էլ տարիք քաղաք, այն դատարանի անդամների բերանը ոսկոր գցեցիր, քեզ էլ օգուտ չը բերեց. բայց մեր վիճակը խօ^ս լաւ գիտես, մի թիզ արտերս չազատւեց. . . : Փառք Աստծո՛ւ, էլի քու արտերից մէկ երկուսը կը քաղւի, հերկերդ փրկւեցին խշմից:

—Մարուք աղբա'ր, Աստւած գիտէ, մոլորւել եմ, . . . Մտքիցդ չանցնի, թէ Վարդեւանը մոռացել է պարտքը, կամ քեզ խաղցնում է, . . . : Միտքս դրել եմ մոզիկ-

ներս ծախել եւ նախիքն եմ ուղարկել, որ լաւ գիրանան: Ուզում ես, իեմիկուց գին դնենք, վեր առ, չես ուզում, մնա՛, աշնան ծախեմ եւ թոխիներիդ գինը տամ:

— Խնչպէս ուզում ես, այնպէս արա, միայն մի՛ մոռանալ, որ շատ նեղութեան մէջ ենք:

— Խօսքս խօսք է, վստահ, գնա գործիդ:

Դեռ իազիւ ճանապարհել էր Վարդեւանը Մարուքին, ինքն էլ շշմած մտածում էր անելիքի մասին, երբ նրա դուռը կտրեց մի ուրիշ հարեւան, որից մի լիրա էր փոխ առել Վարդեւանը ու դատաստանական գործադիր մարմնի ներկայացուցչին տւել, որպէս վարձ:

— Եյն մի լիրան, Վարդեւան աղբա՛ր, հոգուդ մատադ: Մուտուրկանցուց մի սոմար ցորեն գնեցի, կալին պիտի տայ, այսօր նեղութիւն ունի, եկել է, սլահանջում է:

— Մի լիրա՞ն, . . . : Բայց փող չո՛ւնեմ, ճար չը կայ: Զի սպասել մի տասն ու իինգ օր. Ղարսից Գէդեւոնիցս փող պիտի գայ, իսկոյն կը տամ:

— Հաւատացի՞ր, շատ նեղն եմ, մարդը եկել է դուռս, չը տամ, վախենամ, ցորենը թանգէ, յետոյ մանր ու խոշորս նեղութեան մէջ գցեմ, . . . :

— Մի տեղից գտի՞ր, Մարգար ջա՞ն, արեւս վկա՞յ, Գէդեւոնիցս փող ստանալու պէս, տռաջի անգամ բերեմ քեզ վճարեմ. . . : Մի՛ վախենալ շատ չեմ ուշացնի, մի՛ կասկածիլ, նամակ ունիմ, կարելի է, որ իիմի պոլիսն էլ եկած, քաղաք հասած լինի:

Իրար ետեւից, կարծես միախորհուրդ, գալիս էին Վարդեւանի պարտատէրները եւ նա մոլորւած

ամեն մէկին մի մի պատաժիան տալով Ֆանապարհում եւ մորմոքալով հառաջում էր: Քանի որ արտերը ցոլում էին, առատ բերք խոստանում, մարդ չէր լիշեցնում Վարդեւանին իւր պարտքերը: Երբ կարկուտը ոչնչացրեց եւ փչացրեց նրա աշխատութեան պտուղը, ամենքն էլ կասկածեցան նրա պարտաճանաչութեան մասին, (Գոնէ Վարդեւանը այդպէս էր բացատրում) սկսեցին խստիւ իրենց պահանջները ուզել: Մարդ է, դրացիութիւն է, կարիք է, ամենքն էլ ունին պարտը ու պահանջ, բայց պարտապանը չ'ոնեցածից ի՞նչ կարող է տալ:

Հենց այդ դառը մտքերը Վարդեւանին պաշտամած օրերը, քաղաքից մի պաշտօնական եկաւ եւ մի յայտարարութիւն եւս յանձնեց. Թէ Օգոստոսի մէկին աճուրդով ծախւելու է Վարդեւանի շարժական կարողութիւնը: Եթէ այդ կարողութիւնը չը լրացնէր նրա Գէորգ աղախն ունեցած պարտքը, այնժամանակ ինտեւեալ ամսում ծախւելու էր եւս անշարժ կաւածքը: Բաւական չէր այս գուժը, Վարդեւանը պարտաւոր էր գուժկանին կերակրել, պատւել եւ մի փէշքեաշ տալով արծակել: Քէիան եւ նրա խորիղականները այդպէս էին խորհուրդ տալիս: Թէեւ Վարդեւանը հակառակւեց, բայց պաշտօնականը բռնութեամբ մինչեւ չը կորզեց մի մէջիդիէ (մօտ 2 ր.) չը հեռացաւ, դեռ առանց հաշւելու կերած հաւերն ու ծւերը, տարած մածունն ու կարագը, վարեկներն ու գառը:

Հարւածը սարսափելի էր, Մեղրենց արիւնարբուլակուտը մտադրածը պիտի կատարէր: Գեղի մէջ պարծեցածը պիտի գլուխ բերէր, . . . : Վարդեւանի

կայքը, արաերը պիտի Արգուրումի մէջ մունետիկի ձեռքով անուրդով ծախել տար: Այս միտքը սպանում էր Վարդեւանին, այս հարսածը խելաթժուժ արաւ հողագործին, որը գիշեր եւ ցերեկ հանգստութիւնը կորցրեց: Քէհան ու տէրտէրը անընդհատ հետեւում էին Վարդեւանին եւ երկուան էլ քննում էին. Նրա բոլոր արարքները եւ տեղեկացնում մանրամասնտրաք Դէորգ—աղափն, որի մարաքաներն էին: Դէօրգ աղան խոստացել էր անուրդից գնել Վարդեւանի կալւածները եւ յանձնել նրանց մշակելու մարաբայական կարգով: Այս բանից մասամբ տեղեկութիւն ստացել էր եւ ինքը Վարդեւանը:

— Աղջոյն, ասաց մի իրիկուն տուն մտնելով տէրտէրը Վարդեւանին եւ անցաւ բազմեցաւ բազմոցի գլխին, առանց սպասելու տան աֆրոջ բարի—հրամմեցէքներին: Եատ չանցած նրան հետեւեց քէհան, որը նոյնպէս տեղ բռնեց տէրտէրի դիմաց: Վարդեւանը անմոռունջ նստած էր, առանց լսելու եւ մասնակցելու անգամ նրանց խօսակցութեան. Տրտնջում էին դիւդի ջաջերը իրենց վիճակից, անողորմ բաղտից եւ յուսահատութիւնները արտայայտում: Վարդեւանը միայն երեմն երեմն հառաջում էր:

— Ե՞ի, Վարդեւան ազբա՛ր, ասաց տէրտէրը խրատչի տոն տալով իւր ձայնին, ի՞նչ շատ հառացցի՛ր, ի՞նչ շատ մնջեցի՛ր: Աշխարհ է, մի օր այսպէս, մի օր այնպէս կը մթնեցնենք, կ'սնցնի, կ'երթայ: Աշխարհի համար ի՞նչի ես այդքան հոգս քաշում: Այս անցաւոք կեանքն ի՞նչ է, որ մարդ դրա համար այդքան մտատանչվի, դառն ցաւերի ու հոգսերի մէջ մոլորւի: Ի՞նչ ուզում ես արա, կերածդ մի փոք հայ, հագածդ մի ձեռք

հալաւ է: Գույ յաւիտենականի համար մտածի՛ր, որ կամ մշտնչենաւոր երանութիւն է, կամ անվերջ տանգանք: Վախենաս այս փուչ աշխարհի վրա մի աղքատ ապրուստ չը ճարես: Մի՛ լինել միւլքատէր, եղի՛ր մեզ նման մարաբա, ի՞նչդ կը պակսի: Միւլքատէր, թէ մարաբա. զանազանութիւնն ի՞նչի մէջ է: Ամեն դէպքում էլ մի ապրուստ, մի աղքատիկ կեցութիւն: Քանի որ մեզ այնպէս է վիճակւել, որ մեզ պիտի թալանեն միւր թէզիմները, էղնամի մէմուրները, վաշխառուները, չարչիները եւ մեր բերքի մեծ մասը պիտի կողոպտեն, տանեն, աւելի լաւ չէ. որ մենք էլ մտնենք մի մի ուժեղ աղափ հովանու տակ, որ նա մեզ պաշտպանէ, . . . : Ի՞նչ անենք, թէ աղան պիտի կիսէ մեր բերքերքը, խո՛ գոնէ մեր բերքի կէսը մեզ կը մնայ եւ մեզ ամեն պատահեկան չի կարող ճզմել ու ճխլել: Արի ինձ լսէ՛, գնանք, չը թողնենք, որ հողերդ աճըդով ծախւի, տանք Գէորգ աղախն. պայման անենք, դարձիր մարաբա, պրծաւ գնաց. . . .

— Ի՞նչ ես ասում, տէրտէ՛ր, . . . : Ես գնամ ու լիզե՞ իմ թշնամուս ոտքերը, ա!՝ անգութի, որը ինձ քար ու քանդ արաւ, . . . : Ես մարաբա դառնամ, ինքս ինձ իմ ձեռքով գերութեան մատնեմ եւ ամբողջ ընտանիքս աղախն ճորտ շինեմ, . . .

— Մարաբա որ չե՞ս, իբր թէ ստրկութիւնից ազատ ե՞ս: Ի՞նչ տարբերութիւն կայ մի մարդու, կամ տասը մարդու ճորտ լինելու մէջ: Եթէ մարաբա լինես, մի մարդ պիտի քեզ դատեցնէ ու լափէ քու վաստակը եթէ անձնիշխան լինես, ո՛չ թէ մէկ, այլ գուցէ եւ իարիւր մարդ քեզ պիտի կեղեքէ եւ առանց զգալու պիտի դրանց անուղղակի ճորտը լինիս:

—Մարաքա լինելով էլ կողմնակի կեղեքողներից չեն ազատւում, . . . : Բայց հազար անգամ նախապատիւ եմ համարում հարիւրներից կեղեքուել, քան թէ տանս, ընտանիքիս իշխանութիւնը հակառակորուիս յանձնել:

—Մէկ է, առաջ թէ վերջը, կալւածներդ ճախւելու է: Կարող է պատահել, որ աճուրդում մի թուրք, մի քուրդ գնէ արտերդ եւ այն ժամանակ. . . .

—Աւելի լաւ է թուրքի, քուրդի մարաքա լինել, քան թէ հայի, արիւնակցիս, որն ինձ կործանեց եւ աշխատում է գիշեր ցերեկ կործանել իմ դրացիներիս էլ:

—Ոյն որ կորցնելու ես հողերդ, աւելի լաւ չէ, որ համ-կրօնակիցդ էլ առնէ,

—Ո՛չ ո՛չ, ես ուրախութեամբ քուրդին կը տամ, մոլլին կը տամ, թուրքին կը տամ հողերս եւ նրանց ստրուկ կը դառնամ, քան թէ հայի, որ փափուկ փափուկ որօրելովպիտի ծծէ արիւնս, ապականէ կեանք: Քուրդը, զազան կամ իւր շահի համար աւելի լաւ կը պաշտպանէ ինձ: Կամ մի հարւածով կըսպանէ եւ չի տանջէլ բութ, սղոցի նման դանակով.

X.

Գիշեր էր, մառախլամած գիշեր, նման աշնան գիշերներին, որոնք ձմռան շուտափոյթ մերձենալն են բոթաբերում: Անձրեւի, թոնի շատ մանրուք էր թափում եւ աւելի գարնան, քանց ամառնային գիշերւան էր նմանում: Խոնաւած, թորւած հողի երեսով չստերը ցեխոտելով առաջ էր գնում Վարդեւանը

յամբ քայլերով եւ մտորելով։ Գիւղում ոչ մի շշուկ չէր լուռում, ոչ իսկ քամու նշոյլը կար, որ գոնէ նրա սուլոցին վարժ ականջները չը ծակեր։ Գնում էր պատից պատ բռնելով եւ երբեմն երբեմն էլ կանգ առնելով։ Նա մի, երկու անգամ քայլերը ետ դարձուց եւ երեք քայլ չը փոխած կրկին շարունակեց նախկին ընթացքը։ Վարդեւանը աւելի գլորւում էր, քան թէ գնում։ Նա աւելի գիտականման թաւալումներով էր տատանւում։ Նրա գոյնը մեռելային տիպար էր ստացել, նրա խրոխտ աչքերը փոսն ընկած—յանգածի էին նմանում եւ նրա անդամները սայթաքելով էին շարժում։ Կանգ առնելով, խորհելով վերջապէս նա հասաւ Մանուկի դրանը եւ բաղիսեց։ Ներսից երկար պատասխան չը ստանալով կրկին բաղիսեց եւ վերջապէս Մնացականը դուռը բաց առաւ, առանց Ցրագի մուժ բակից ներս առաջնորդեց իւր ապագայ աներոջը։ Մանուկը նրան ուրախութեամբ դիմաւորեց եւ նստացրեց իւր բարձր կողմը։ Երկար տատանւելուց եւ սովորական խօսակցութիւնները կատարելուց յետոյ, ասաց Վարդեւանը։

— Մանուկ աղբա՞ր, վաղը քու աղադ՝ Շեյխը գեղ պիտի գա՞յ։

— Այո՛, նա ինձ այսօր խաբար էր արել։

— Ուրեմն այգւան անպատճառ կը գա՞յ։

— Եթէ մի արգելք չը լինի։

— Գիտես ի՞նչ կայ, ես ուզում եմ դրանից մի տասնը հինգ լիրա վերցնել եւ այդ Մեղրենց լակոտների գործը վերջացնել։ Գու մէկ դրան կամաց իմացուր եւ տես, գլուխ գալու բան է, գամ ու վերջացենք։

— Բայց նա առանց գրաւականի եւ դաշնագրի չի տալ:

— Այդ էլ կը տամ. ճարս ի՞նչ է, . . . : Փոխանակ թողնելու, որ աճուրդով ծախւի եւ այն անգութ արիւն ծծողների ծեռքն անցնի, ես ինքս գրաւ կը դնեմ: Գուցե բաղաս բերեց, պարտքս կը տամ եւ կայքերս կազատեմ, . . . : Թէ ո՞չ աւելի լաւ է Շեյխի ծեռքըն անցնի եւ Շխմոցը Շեյխին բաժին դառնայ, քան թէ այն տուն քանդող, օջախ կործանող Գէորգ—աղան տիրէ իմ կայքերս: Հազար անգամ լաւ է Շեյխին մարաբա դառնալը Շէորգ աղաին ստրկանալուց:

— Դրան կարծիք չը կայ. մանաւանդ որ Շեյխը հոգւով կպածէ գործի եւ ոչոքի չի թոյլ տալ, որ իւր մարաբաին կեղեքէ, այն ինչ Գէորգը, ինչ էլ որ լինի, էլի մի հայ է եւ կողոպտման ենթակայ: Կաւ, ես առաւոտ կը խօսեմ ու քեզ կը կանչեմ:

Հետեւեալ օրը ճաշից առաջ Մանուկը կանչել տւեց դրացուն եւ ներկայացրեց իւր աղաին: Շեյխը ոտից գլուխ Վարդեւանին քննելուց յետոյ, ասաց.

— Տղա՛, փող ես ուզել, նեղութեան մէջն ես եղել, այդ անօրէն Գէորգը քեզ էլ իւր թակարթն է գցել: Բայց ի՞նչ օգուտ, փող չո՞ւնիմ քեզ տալու:

— Աղա ջա՞ն, դու գիտես, օջախդ եմ ընկել, դու պիտի ինձ ազատես: Տասն ու հինգ լիրայով ինձ գերութիւնից կազատես:

— Ես փող չունիմ, այսինքն հիմի ազատ փող չունիմ, բայց տասն ու հինգ օրից, մի ամսից յետոյ կարող եմ տալ, ոչ թէ տասն ու հինգ, այլ յիսուն—հարիւր, որքան որ ուզես:

— Աղա ջա՞ն, քեզ մատաղ, քու զաւակներիդ մա-

տաղցուն հաշւելով, փրկի'թ ծառայիդ մանր ու խո-
շորին այս գերութիւնից: Ո՞ր կամենաք, կարող էք
գտնել,...: Ինչ դժւար է քեզ համար տասնը հինգ,
կամ երեսուն լիրա գտնելը:

— Ես մարդու դուռ չեմ գնալ եւ ոչ ոքից փող չեմ
խնդրել: Եթէ ուզում ես, կարող ես համբերել մի
չորս—հինգ օր յետոյ եկ քաղաք եւ եթէ պատրաստի
փող ունենամ կը տամ, չեմ խնայիլ. միայն գրաւա-
կանով եւ ապահովութեամբ.

— Ինչպէս կամենում էք, ես պատրաստ եմ բոլոր
կայքերս ձեզ մօտ գրաւ դնել:

— Քու քոչաններդ (կալւածագիր) որտեղ ե՞ն,
նրանք վեր առ եւ բեր: Մինչեւ օրինական դաշնա-
գիր չը կապես, մինչեւ բոլոր քոչաններդ չը յանձնես
ապահովութեան, չեմ տալ: Տոկոսն էլ օրինական, ես
ձեր հայերի նման անխիղճ չեմ, մէկին տասը չեմ առ-
նել, իմս հարիւրին քսանը չորս, որոշ, կտրական, ոչ
աւել եւ ոչ էլ պակաս: Խօսքս էլ տղամարդու խօսք,
ինչպէս կը տամ, այնպէս կը կատարեմ, ինչպէս խօսք
առնեմ, այնպէս էլ խիստ պահանջող եմ: Օրը օրից
չեմ անցկացնի, որոշեալ ժամին ու ժամանակին ետ
կը պահանջեմ: Ինչպէս տալուց երես չեմ դարձնել,
այնպէս պահանջելուց չեմ վախենայ, չեմ կասկածի
եւ չեմ մեղմանայ: Պայմանիցս մի մազ անգամ չեմ
շեղւիլ եւ սկզբից գէշ մարդ կը լինեմ, ճշմարիտը կը
յայտնեմ, որ ապագայում ո՛չ թէ ես, այլ ինձ հետ
գործ բռնողը պարտազանց գտնւողը ամաչէ եւ լե-
զուն չը համարձակի առաջս շարժելու: Ուզում ես,
ա՛ռ, չես ուզում, մի՛ առնել: Խելքդ կտրում է, մօտեցիր
փողերիս, թէ ո՛չ, հեռու կեցի՛թ ինձանից, որովհետեւ
ես խոստմնադրուժի գլուխք կը փշրեմ:

—Մարդն էլ այդպէս է պետք, աղաի պարտականութիւնն էլ այդ է, որ ճշմարտութիւնը սկզբից խօսի եւ շողոքորդ շարժումներով ու խօսքերով չը խաբէ իրեն դիմողին:

—Ուզում ես, տա՛ր, չես ուզում, մի՛ տանիլ: Որքան ժամանակի ուզում ես, այժմեանից որոշիր եւ հաշիւդ լաւ քննէ, որ վերջը չը զղաս, ասաց խրոխտ նայւածքով Նէյխը, զանալով դէմքին աղայական միմիկաներ տալ:

Արդէն ժամանակ էր, Վարդեւանը հեռացաւ, յուսադրւած եւ հինգ օր յետոյ քաղաք գնալով գրաւի դրեց իւր բոլոր հողերը տանը հետ Նէյխի մօտ քսանը վեց լիրայի: Նա ստացաւ միայն տասն ու վեց լիրա ու կէս, որը յանձնեց Գէորգ աղաին եւ արդարադատութեան պաշտօնեաներին եւ ազատւեց Մեղրենց ժառանգների ճերաններից: Կէս ոսկի դրօշաթղթի վճարեց, երկու ոսկի նօտարական ծախսերին, մի ոսկի դադիին եւ մի ոսկի էլ կալւածական պաշտօնակալին, որ արծանագրութիւն կազմեց Վարդեւանի կալւածագրերը Նէյխի մօտ գրաւական թողնելու մասին: Այնպէս որ Նէյխին, ճշմարիտ է, Վարդեւանը տւեց միմիայն քսանը չորս տոկոս քսանը մի լիրաի համար մի տարեկան հինգ լիրա շահ, բայց իսկապէս Վարդեւանը վճարեց ոչ թէ քսանը չորս տոկոս, այլ նա պարտաւորւեց վճարելու մօտաւորապէս վախտուն տոկոս:

Ուղիղ է Նէյխը քսանը մի լիրա վճարեց եւ քսանը վեցի մուրիակ ստացաւ, այնպէս որ նա ամեն տեղ կարող է արդարանալ քանի որ վեր է առել լոկ իւր դրամի համար քսանը չորս տոկոս, բայց Վարդեւանը

դրօշմաթղթի, նօտարի, ղադիի եւ կալւածական ատեանի ծախսերը, այդ փոխառինութեան պատճառով վճարելով, նրա գրպանից դուրս եկաւ իրեն հարկաւոր գումարի համար մօտ վաթսուն տոկոս: Յանկարծ երբ ամռն վճառումները կատարելուց յետոյ, հաշիւը կարգի դրեց Շէյխը եւ քննելով յայտնեց Վարդեւանին տարեգլսին վճարելիք գումարի քանակը, վերջինս մնաց ապշած: Ամեն վճարում իւր ներկայութեամբ էր եղել. Շէյխը պարտական չէր նրա փոխարէն ծախսեր կատարել, իետեւաբար ինքը պարտաւոր էր դեռ համբուրել իւր Շէյխ աղաի ջիւբի փէշերն ու իեռանալ անվերջ շնորհակալիքը յայտնելով:

Բայց Արզուրումից Շխնոց, հինգ վերստաչափ ճանապարհը մինչեւ համսելը, Վարդեւանը դառն մորերով եւ առաջիկայում իրեն սպասող սոսկալի ապագայի խնդրով այնքան տանջւեց, որ գունատւած, մեռելատիպ հազիւ տուն ընկաւ: Քսանը վեց լիրա կրկնում էր նա անդադար, քսանը վեց օսմանեան ոսկի եւ յուսահատւում: Այդքան գումար որտեղից պիտի միանւագ ձեռք բերէր եւ Շէյխին տալով կալւածքը գրաւից ազատէր: Թէեւ զգում էր, հայելու նման աչքի առաջ տեսնում էր իւր սոսկալի անկումը, նկատում էր եւ հաւատացած էր, որ պարտատէրը ամենադաժան կերպով իրեն թեւից բռնելու, դուրս էր վանելու հողերից ու տանից, բայց մի խաբուսիկ յոյսով, մի աղօտ յոյսի նշոյլով նա տատանում էր: —Կարելի է գալ տարի Աստւած տւեց, հերկերս քսան քսանը հինգ սոմար ցորեն բերին: Կը տամ, կը պըծ նիմ եւ կ'ազատեմ հողերս,

Անքեր տարուն հետեւեց ցըտաշունց ձմեռը, ինը սոսկալի սառնամանիքով ու բքերով։ Վարդեւանը իւր մանր պարտատէրներին գոհացնելու համար շատ քանից զրկել էր այդ ձմեռ եւ մեծ զրկանքի մէջ էլ մնացել էր ընտանիքով։ Ինչպէս դատարկ էր նրա ամբարը, այնպէս էլ պարպւած էր քիլարը, մառանը։ Արդէն Թգոստոսի մէջ, երբ նկատել էր, որ քաղելու բան չէր մնացել արտերում, փոքր որդուն՝ Մելքոնին էլուղարկել էլ Ղարս, իւր ծանօթ որմնադիրների մօտ քար տաշելու եւ օրական ստանալով, իրենց օգնելու։ Գէդեւոնի եւ Մելքոնի օրականները ոչ միայն պետական հարկերը պիտի ծածկէին, այլ պիտի ընտանիքի ուտելիքն էլ մատակարարէին, քանի որ իրենց բաղդից տարին ստերջ էր եկել։

Բայց գործաւորի—օրավարձը, բանւորի էլ վիճակը շատ միխթարական չէր Ղարսում, նրանք նոյեմբերի սկզբներին Ղարսի սառնամանիքից ստիպած հեռացել էին դէպի Բագու—Բաթում երկաթուղու գծի վրա գործ գտնելու եւ Միխայելովի կայարանումկամուրջ-ների համար քար էին տաշում։ Այդ հեռաւոր անկիւներումն էլ շատ հեշտ չէր փող վաստկելը եւ տուն հասցնելը, այնպէս որ Վարդեւանը խիստ նեղութեան մէջն էր, ինչպէս մանր պարտքնտէրներից, նոյնպէս ուտելիքի կողմից։ Օրից օր վիճակը վատթարանում էր եւ յուսահատութիւնը տիրում։

Այդ դժբաղութիւնների մրա աւելացաւ մի նոր խայտառակութիւն եւա, մի գիշեր Մարգարիտը Մնացականի, հետ փախան։ Այդ փախուսաը ինչպէս կացարին ոչինչ չիմացան ծնողները, մինչեւ անգամ տարակուսանքի մէջ էլ մնացին, կասկածելով, որ չը լինի,

Թէ Թուքքերի ճանկն ընկան սիրահարները եւ փորձանքների մասնւեցան։ Գարանը որքան ողբում էր եւ ինչ փաստեր ներկայացնում էր, չէր կարողանում Վարդեւանին համոզել, իւր անմեղութիւնը հաւատացնել։ Առաւօտից մինչեւ իրիկուն լացեց Թշւառմայրը, երդւեց, ողբաց ու սգաց, բայց Վարդեւանը անյողդողդ մնաց իւր կարծիքի մէջ։ Մանուկն էլ փընդրում էր իւր Մսացականին, բայց չէր համարձակում մօտենալ իւր հարեւանի դռանը։ Վերջապէս երկու խնամիներն էլ մոռացան անցեալը եւ սկսեցին միջոցներ ձեռք առնել, որոնել ու գտնել տարփաւորներին։ Գիւղ—քաղաք չորս կողմը մարդիկ սփռեցին, որ գտնեն իրենց կորուստը, բայց ոչ մի կողմից տեղեկութիւն, բացատրութիւն չեղաւ, այնպէս որ ամբողջ շաբաթ անցաւ եւ չը յայտնւեցաւ, չիմացւեցաւ սիրահար փախստականների յետքը։ Մազում, Օվայում գիւղ մնաց, որ չորոնէին, Բասենից, Թորթումից ու Դերջանից անյոյս վերադարձան փնտրողները եւ բաւական չէր քաղցի, ցրտի եւ պարտքերի մէջ նեղւիլք Վարդեւանին պետք էր եւս հալումաշ լինել Գարանի հետ իրենց փախստականների մասին եւս,....։

XI.



Անցաւ տասն եւ հինգ օր, անցաւ եւ ամիս բայց Վարդեւանն ու Մանուկը իրենց զաւակների տեղը չիմացան։ Եթէ ձեռքերում մի քանի սեւ փող է ընկնում, ախոռներում գառից, հորթից, եւ հափինչ էլ որ ունէին, ծախում էին եւ փողը պոստ

իեռագրի եւ մասնաւոր անհատների վրա ծախսելով
անցկացնում էին օրերը: Սառնամանիքը օրից օր սաստ-
կանում էր, բուքն ու թիվին չէին կտրւում, սրանց
իետ միասին չունեւորութիւնը տանջում էր գիւղա-
կանին: Արդէն երեք ամսից աւել էր, որ ո՛չ մի փարա
փող, ո՛չ էլ նամակ էին ստացել Գէդեւոնից ու Մել-
քոնից:

Բաւական չէր, որ քաղցից ու բքից տանջւում
էին Վարդեւանն ու Գարանը, մանր պարտասէրներն
էլ նրանց դադարումը կտրել էին: Օր չէր անցնել,
որ իինք տասը մարդ չը կտրէր նրանց դուռը եւ
փող չը պահանջէր: Ել ո՛չ պատիւ էր մնացել, ոչ էլ
երեսի ջուր, խօսքի էլ հաւատ չէին ընծայում, եր-
դումի էլ, քանի որ անչափ անգամ խաբւել եւ միշտ
դատարկածեռն էին իեռացել պահանջատէրները
Վարդեւանի դոնից: Յաճախ Վարդեւանը աղջկան
փնտրելու պատրւակով գնում էր քաղաք, մի քանի
օրով այս ու այն գիւղը գլուխը մի կերպ պահելու
պարտատէրների ձեռքից, որոնք նրան իւր տան մէջ
հանգիստ չէին թողնում: Բայց ոչ մի միջոց չէր օգ-
նում, գիւղից ձեռք չէր կարողանում քաշել, իսկ երբ
վերադառնում էր, բոլոր պահանջատէրները միասին
գալիս եւ սկսում էին իրենց պահանջներով տաջնել:
Վախով ու ախով Վարդեւանը անցկացրեց իւր
տօները՝ ծնունդն ու մկրտութիւնը, չոր ու ցամաք
խաշած խոտերով ու արմտիներով կատարեցին բա-
րեկենդանները եւ դիմաւորեցին պահոց օրերին նւա-
զած ու չորացած մարմնով: Թէքւեց Փէտրւարն էլ եւ
գարնանամուսն էլ հասաւ, բայց ձիւները հալչելու
կամք չունէին, հիւսիսի սոսկալի քամիները փչում

իսրայէլի տու բանակամամալ ու առաջարկ ու առաջարկ
էին դեռ եւ սարսռեցնում ամեն քան: Մարդիկ
անասունները իրենց որչերից, իրենց ախոռների
չեին կարողանում դուրս գալ:

Հենց այդ օրերում հազիւ մի նամակ էր ստա-
ցել Մանուկը իւր որդուց՝ Մնացականից, որը ձեռքին
շտապել էր Վարդեւանի քով կարդալ տալու եւ
միսիթարւելու յոյսով: Վարդեւանը վշտաբէկ եւ յու-
սահատ առաւ նամակը եւ ծանր ու հեկեկալով յեղ-
ցուցիչ ձայնով սկսեց կարդալ: Գարանը եւ Մանուկի
կինը՝ Մարիամը քիչ հեռուն մժնում կանգնած լսում
էին բովանդակութիւնը:

«Միրելի ծնողնե՞ր, հայրե՞ր ու մայրե՞ր:

«Մենք լսեցինք, որ Դուք մեզ շատ փնտրել, շա-
տրորւել եւ շատ էլ տանջւել էք: Լացինք ձեզ համար,
ցաւեցանք ու մորմոքացինք, քանի որ աշխարհում
ձեզանից աւելի սիրելի, աւելի մերձաւոր ցաւակից եւ
բարեկամ չենք. կարող գտնել: Որքա՞ն որ դուք
մեզ համար էք տանջւել, այնքան էլ մենք ցաւերով
ենք տապակել եւ հառաջել ձեզ համար: Այժմ սոյն
նամակով Ձեզ դիմելով, խնդրում ենք, որ մոռանաք
անցեալը, մոռանաք մեր պատճառած բոլոր սրտմա-
շուք կսկիծները եւ օրինէ՞ք մեր ամուսնութիւնը:»

«Դիւղից հեռանալով մենք Բասէնի վրայով Եկանք
հասանք Ղարառւրդան մի օրւայ մէջ, այնպէս որ
երկրորդ օրը առաւօտեան անցնելով ռռւսական սահ-
մանը, մենք արդէն ապահովւած համարեցինք մեր
կեանքք: Հայրի'կ ջան, ապրի', շատ ապրի մեր ֆաթ-
ման՝ մատեանը, նա կարծես, զգում էր, որ մենք
շտապում ենք փախչելու ազատւել Եխնոցից, թուր-
քերից եւ աղաներից, փշրել մարաբայութեան շղթան,

դրա համար էլ թուջում էր, թուջուտում էր մինչեւ
մեզ տեղ հասցնելը; Բայց ցաւում եմ, սիրաս կտըր-
տւում է, որ ես պարտաւորւեցայ այդ մատեանը ծա-
խել Բաշ—քէօյի քէհախն եւնքա գնով կաշառել տեղի
տէրաէրներին, որ մեզ պսակին: Առանց ձեզ մենք
պսակւեցինք Բաշ—Քէօյ: Խնդրում ենք օրինէցէք մեզ,
ներեցէք մեր կամապաշտութեան եւ Թողութիւն
տւէք:

«Հարիւր բուրլվ ծախէցինք ֆաթմախս, բայց
երկու հարիւրից աւել կը տային, եթէ մենք անցագիր
ունենայինք, վախ չունենայինք գիւղապետից: Լաւ էր,
այդ փողից մի քառասուն բուրլի ետ պահեցինք,
որով երեք ամիս գիւղերում գլուխներս պահելուց
յետոյ, եկանք Դարս եւ ահա քսան օրէ Դարսում
տուն բունած աշխատում եւ ապրում ենք: Դիտեմ հայ-
րիկ, նէյխը ֆաթմախ համար քեզ շատ է տանջելու,
շատ է զրկանքների մատնելու, բայց ի՞նչ անեմ,
առանց ֆաթմախ ո՞չ կարող էի Մարգարտիս փախ-
ցնել, ոչ էլ գլուխս պահել, ճանապարհին ետեւիցս ըն-
կած պլուտ: զափթիէններից եւ քուրդ աւազակներից:
Այդ ձիու գինը մեզ փրկեց, օրինական պսակին ար-
ժանացուց եւ այս օտար երկրում մեզ ապրուստ
տւեց երեք ամիս աւելի, մէկ խօսքով մեզնորից գնեց:

«Դուք գիտէք, որ մենք ճարահատ դիմեցինք
այս միջոցին, եթէ դուք օրինէիք մեր ամուսնութիւ-
նը, եթէ Վարդեւան ափարը դէմ չը կենաը մեր միա-
ցման, եթէ մենք մարաբայութեան ենթարկւած չը
լինէինք, յայտնի բան է, այս բոլորը չէր կատարել
բայց մեր վիճակը մեզ ստեպեց, ո՞չ միայն ձեզ զայրա-
ցնել մեր փախուստով, այլ ձեզ նեղութեան ենթարկել

ֆաթմաի' մատեանի պատճառով: Հաշւի'ր, հայրի'կ, թէ
ինձ բաժին տւիր, տանից հիռացըիր: Լաւ համոգ-
ւած ես, որ ես այլ եւս չեմ կարող ետ դառնալ, քա-
նի որ Վարդեւան ափարը առողջ է, ես նրա աչքին
երեւելու չեմ համարձակւիլ: Մանաւանդ որ Նէյխի նման
աղաի ծեռքի տակ մարաբա լինելը մեզ բնաւ հաճելի
չէ: Տարին տասներկու ամիս նրան համար աշխատե-
լուց, հոգնելուց դադրելուց եւ մորմոքալուց յետոյ,
նրա եւ իւր տռփոտ լակոտների կրքերին զոհ դառ-
նալու առիթներեց փախչելու է, . . . :

«Ես արդէն այստեղ մտայ Դւնիկցի վարպետներ-
մոտ քար տաշելու, օրական առ այժմ մինչեւ մի ըուբի
վաստակում եմ, այնպէս որ այդ փողով մենք երկու-
սով հանգիստ ապրելուց ջոկ, կարող ենք մի քան ետ
գցել եւ ձեր նեղութիւններին էլ օգնութեան հասնել:
Թէեւ այստեղ էլ գարուն չէ եկել բայց շատ գործ կայ,
որոնց համար քար են պատրաստել տալիս ձմեռը, տա-
շում եւ գարուն բացւելու պէս գործերը կարգի դնում:
Խոստացել են գարնանը ըուբլուց աւել օրական տաք-

«Ուղիղ է, այստեղ էլ աշխատում ենք ուրիշի
դրանը, այստեղ էլ մեր աշխատանքից մաս ու քա-
ժին են հանում վարպետները, վերակացուները, կա-
պալառուները, այնպէս որ մեր աշխատութեան գնի
կէսն էլ մեզ չի համում, բայց համեմատաբար այդ-
տեղից շատ ու անչափ հանգիստ ենք եւ հոգիներս
չի խռովում անգութ աղաների, դաժան գործակալ-
ների եւ դատարկապորտ ոստիկանների ներկայու-
թեամբ: Այդտեղ պարտաւորւած էինք դառն աշխատե-
լուց յետոյ, ոչ միայն չոր ու ցամաք ապրուստով զրկան-
քների մատնել մեր անձը, այլ մինչեւ անգամ լռելու,

մնջելու եւ գլուխներս կախած հնազանդելու այն հարւածների առաջ, խոնարհելու այն ձեռքերի տակ, որոնք մեզ տանջում էին: Այն ինչ այստեղ մենք ո՛չ մի- այն մեր վաստակը ուտում, խմում, կարգին հագնուում ենք, այլ մինչեւ անգամ մեզ գործ յանձնողների դէմ բողոքում ենք, երբ մեզանից բան են ուզում քաշել, մեր պահանջներից, օրավարձերից զեղջել:

«Միայն ձեր կարօտն է մեզ աանջում, միայն ձեր մերն է մեզ յիշեցնում հայրենի օջախը, թէ չէ մարա- բյական լուծը այնպէս է դառնութեամբ լքցըել սիր- ուերս ու հոգիներս, որ յաւիտեան նիսոցի անունը չէ- ինք ցանկալտալ, նէյխին չի յիշելու համար: Մեր վերա- բարձին մի՛ սպասէք, մեր վզին ձեր դառնութեան լլթան անցկացնելու մի՛ տքնիք, ո՛չ ետ կը գանք, որ ո՛չ էլ թուրքի, քուրդի եւ աղաի երես տեսնենք: Նե- րիք է, որքան սրտերումս կուտակւած մաղճը, թոյնը պարտաւորւել ենք փսխել ու կրկին կլանել, կուլտալ ուել ու համբերել: Աւելի լաւ է օրականի յոյսով մնալ և այս պանդիտութեան մէջ չարչարւիլ գլուխ պա- նել, քան թէ տուն դառնալ եւ աղաի առաջ գլուխ թէքել եւ մորմոքալ:

«Դիրս մասնաւորի երկար գրել տւինք, մեր վի- ճակը ձեզ յայտնեցինք, որ էլ ո՛չ մեզ փնտրէք, ո՛չ էլ մեր վերադարձին սպասէ՛ք: Միայն ծիզանից կր- ին ու կրկին խնդրում ենք, որ մեզ օրինէ՛ք, մեր սրաըքը մոռանաք, մեզ թողութիւն տաք:

«Համբուրում ենք ձեզ բոլորիդ: Զեր որդիքը նացական եւ Մարգարիտ:»

«Յ. Գէդեւոնն ու Մելքոնը Միխայէլովո են աշ- ատում, գալողներից լուր ստացանք, որ առողջ են,

յաջող եւ ինչ որ կամուըջների վրա են աշխատում։

Կարդացին ու հառաջեցին հայրերը, արտասւեցին մայրերը եւ սրանց արտասուըը թուզեց իրենց կրծկալները, ողողելով իջաւ գոգնոցները թացցուց։ Վարդեւանը տեղ տեղ նամակը մի քանի անգամ կարդաց, մի քանի անգամ զննեց եւ վար դրեց։ Մանուկը մոլորւած տքում էր եւ խեղդւած ձայնով շըր։ Թունքների միջից դուրս մղում իւր այրւած սրտից բղխած հառաջանքները։ Երբ ընթերցանութիւնը աւարտեց Վարդեւանը, ու վար դրեց նամակը Գարանն ու Մարիամը հեռացան հիւրասենեակի մթութիւնից տան խորքերը եւ սկսեցին հեկեկալով լալ։

— Հիմի բան չունիմ ասելու, մըմնջած Վարդեւանը, դոչա'ղ տղա, հալալ լինի քեզ աղջիկս։ Աշխատի՛ր ու ապրեցէ՛ք։ Մարաբայութիւնից փախչողը Աստծուն կը մօտենայ, խելքը գլխին մարդն էլ երթայ ու մարաբա դառնայ։ Բայց ի՞նչ եղան այդ անխելքները։ Այդ յիմար Մելքոնը չի էլ մտածում, որ ցանքները մօտեցան եւ հայրը մինակէ, միս մինակ։ Ես այնքան հողս ինչպէ՞ս կարգի քերեմ մինակ։ Յիմարը չի մտածում, որ իւր ամբողջ տարւան վաստակածից իմ արտերս ութ—տասն անգամ աւել կը քերէն, եթէ փորձանքի չենթարկին։

Լռեցին երկու խնամիները եւ Վարդեւանը սուզւեց իւր ցաւերի մէջ, այնապէս որ իսկոյն մոռացաւ աղջկան։ Նրա աչքերի առաջ ներկայացան Գէորգ աղան, Շէյխը, պատատէրները, որդիքը եւ նա թմրած, ինչ անելիքը չէր կարողանում վթռել։ Մանուկն էլ նոյնպէս խրւած էր իւր ցաւերի մէջ։ Որդուց յաւիտեան բաժանւելու հարցը, բաց արեց նրա աչքի վրա։

մայն քողը, որը թոյլ չէր տալիս իսկութեամբ զննելու
և միհակը:

Ենամիները իբարից շուտով քաժանեցան, արօր-
այ հացի խնդիրը, տիրող սովոր, ստամոքսի քաղցից
ռաջացած մորմոքը նրանց ստիպեց, առժամանակ
տանալնոյնպէս իրենց սիրելիների կորուսար, որոնց
ամին նամակի առթիւ քիչ փղձկացել ու լացել էին:
ոկոյն նրանք ընկան այս ու այն դատարկ ամաննեւ
ողողեցին պտուկներն ու բղուղները, աւեցին
մքարների անկիւններն ու արանքները, որպէս զի
ու օրն էլ լքցնեն իրենց անյատակ ստամոքսները,
նիւ յաջորդ օրւան մի կերպ համնելու, ...:

XII

Որ օրի վրա Վարեւանը գնում էր Արզուրումեւ
գալիս, բայց ո'չ միայն փող, այլ մինչեւ անգամ
մակ էլ չը կար: Որտե՞ղ էին Գեղեւոնն ու Մելքոնը
ղեկութիւն անգամ չունէր Վարդեւանը: Ցանքսի
որը մօտենում էին, մոլորութիւնը տիրել էր թըշ-
տ. պարտապանին: Եէյսի պարտքի ժամանակա-
զոցին մնացել էր եւ ոչ իսկ վեց ամիս, եթէ ար-
քը չը ցանւէին, արդէն պետք էր ծեռք քաշել
ևն բանից էլ: Ղարսից դարձողները ո'չ մի տեղե-
ւթիւն չէին բերում Գէղեւոնից, իսկ համբերու-
ւնը համարեայ թէ կտրւել էր:

Այդ բոլորի վրա աւելացաւ եւս զինւորական
զքի (բէդէլէթ ասքերիէի) խնդիրը. գործակալները

գիւղ էին եկել եւ բռնադատում էին երեք օրւան
մէջ հաւաքել յանձնել տուրքը: Քէիա ու գզիր, զաբ-
թիա ու զարիթ ընկել էին դռնէ դուռ մտրակի
հարւածներով գանակոծում, հայոյում եւ անհամբեր
պահանջում էին անմիջապէս լրացնել գումարը: Այդ
բոլոր նախատինքի հետ դեռ եւս ստիպում էին, որ
իրենց հիւրասիրեն գառներով, հաւերով, կարագու-
շաքարով ու մեղրով:

—Անօրէննե՛ր, գոռում էր զաբթիէն, գարուն
մտաք, դեռ տաս—քսան օր էլ անցաւ, ինչի՞ չէք
շտապում գլխագիններդ վճարել որ ազատ ապրիք:
Անհաւատներ, ի՞նչի էք տանջումմեզ ինչի՞ էք ստի-
պում գորգուալ ու պահանջել: Դուք ձեր կեանքերը
փրկելու համար պարտաւոր էք ինքներդ օր առաջ
ամեն գործից առաջ փրկանքներդ պատրաստել եւ
վճարել: Այս ի՞նչ հարկ է, որ խաղ էք անում, ձեր
գլխից ձեռք է՞ք քաշել, ի՞նչ է....

Ամեն մարդ ճար ճուր էր անում, գրաւական
էր գտնում, պարտք անում, որպէս զի ազատւէլ
անօրէնների ճիրամներից, գլուխը փրկէր փրկանքը
պահանջողներից: Ուղիղ է սուլթանները եւրոպացի-
ներին խաբելու համար գլխագնի փրկանքի (չէզիէ)
անունը փոխել ու զինուրական տուրքի էին վերածել
բայց նրանց գործակալների համար, հարկը վճարող
ների համար դարձեալ այդ տուրքը գլխագինն էք
Դէսից դէնից ոլոր մոլոր գալարւելով գալիս էին շի-
նականները եւ քառասուն կապոցների մէջ հանգուա-
տած ոսկիններն ու արծաթները թափում հարկա-
հաւաքների առաջ:

Եկաւ Վարդեւանն էւ, բայց ճար չունէր, փո-

չունէր, մոլորւելէր ու մնացել: Վրա հասաւ զաքթիան ու մտրակով լեռդին, գլխին ու ազդըներին սկսեց մտրակել ու գորգուալ:

—Անհաւա՛տ, այս երեք օր է, խաբում ես, խաբում ու մինչեւ անգամ չես էլ գալիս աղախն (պաշտօնեային) տեսնելու: Մենք ձեր գերին ենք, որ գանք այստեղ սպասենք, օրեր մթնեցնենք, թէ ի՞նչ է դուք ջեզիէ (փրկանք) պիտի տաք:

Բոլորը դողդղում էին եւ Վարդեւանը աչքերը արիւնով լքցւած չէր իմանում, թէ ինչպէ՞ս զալի իւր արդար զայրութը: Նա բորբոքւած, բայց հանդարտ ծայնով ասաց.

—Աղա՛, ի՞նչ իրաւունքով թողնում էք, որ այս զաքթիէն սուլթանի շնորհած օրէնքերի հակառակ բռնութիւններ կատարէ, մարդ մտրակէ, արիւնլայ անէ: Այս ի՞նչ խիղճ է, այս ին'չ կարգ է, որ սուլթանի պաշտօնականը, նրա հրովարտակների հակառակ շարժւի: Ես, աղա, հիմա գնալու, բողոքելու եմ վալիին, հեռագիր եմ տալու սադր—ազամին,... ես այս անարգանքը չեմ կարող տանել,... ե՛ս...

—Անհաւատին նայի՛ր, անօրէնին մտիկ տո՛ւր, մեզ օրէնք պիտի սովորեցնէ, ասաց մտրակելով զաքթիէն, սարսափ սփռելով քէհափ, գզիրի ու գիւղացիների վրա: Անհաւատ հաստակողե՛ր, մինչեւ չը մըտրակեն, մինչեւ որ թոփուզը ձեր գլխին չը տան, պարքերդ չէք վճարել:

—Աղա՛ խօսք հասկացրէ՛ք այս զաքթիէին, լսեցէ՛ք, ի՞նչ եմ ասում, յետոյ վճիռ տւէ՛ք, ինչ անելու էք արէք:

—Յսմա՛ն, ասաց գործակալը զաքթիէին եւ նշան արաւ, որ դադարի,...:

—Աղա՛, դուք տեղեկութիւն չո՞ւնիք, սրանք, տէրութեան պաշտօնականներին դիմադրելու համար հոգի են տալիս: Խելքերը մտքերը մեզ ընդդիմանալու հետ է, ասաց զաբթիէն եւ ետ քաշւեց, սպասելով տիրոջ ակնարկին: Վարդեւանը մօտեցաւ եւ ասաց աղախն.

—Դուք ինձանից ի՞նչ էք պահանջում,

—Քիզանից պահանջում ենք եօթը լիրա եւ քսան դուրուշ:

—Պատճա՞ռը, ես քանի հոգի ունի՞մ, խնդրում եմ, կարդացէք ցուցակը:

—Անհաւա՛տ, կարծում ես քեզանից աւել են պահանջում, ինչ որ գրւած է տոմարում, այն էլ պիտի տաս: Տասն ու մէկ հոգի էք (նուֆուզ—շնչաւոր) եւ որպէս համբա կորածների եւ աղքատների համար էլ մի նուֆուզի փողաւելպիտի տաք, վաթսուն դուրուշ, գումարը եօթը հարիւր քսան դուրուշ:

—Ախար ես երեք շնչաւոր (նուֆուզ) ունիմ, ինչի՞ պիտի տասն ու մէկ հոգու հարկ տամ: Ախա՛ր գութ ունեցի՛ք, խիղճ ունեցի՛ք: Հաւատի—կրօնի կէսը խիղճն է կազմում: Երեք հոգու փոխարէն, ես ինչի՞ պիտի տասն երկու հոգու չէզիկն տամ: Ես եմ ու իմ երկու որդիքս:

—Այդ մեր գործը չէ, գնա՛ բողոքիր նահանգական արձանագրութեան ատեանում եւ արձանագրութիւնները փոխել տուր: Ահա քու ընտանիքի ցուցակը, Գալօ՛,

—Այդ հայրս է, որ մեռել է տասներկու տարի առաջ. քանի՛ մէկ ես դըա հարկը պիտի վճարեմ, մառածի համար էլ փրկանք կը վճարե՞ն: Ամեն տարի գնում եմ ու ջնջել տալիս ցուցակից դըա անունը,

իսկ դուք ամեն տարի գալիս ու կը կին պահանջում էք:

—Այնպէս չէ կարելի, անհաւատ, ձայնդ կտրի'ր, մեր հիմնարկութիւնները մի' գցել կասկածանքներիդ տակ; Դու լսի՛ր: Վարդօ', Մուքօ, Սաքօ.

—Աղա', Վարդօ'ն ես իմ, բայց Մուքօն ու Սաքօն գնացին ամերիկա եւ այն տեղացի են գրւել, ես ի՞նչ մեղաւոր եմ, որ եղբայրներիս հարկն էլ տամ:

—Այդ մենք չը գիտենք. դու լսիր: Օհան, Արթին, Գեղօն, Մելքոն,

—Աղա ջա՞ն, Օհան ու Արթինը մեռան, իէ՛ խօլերին,

—Զայնդ կտրի'ր, անօրէն, խօսք իմացիր: Մանիկ, Փիլօ եւ Գիրգոր.

—Աղա ջա՞ն, Ալլահի սիրուն, աղա ջա՞ն, սուլթանի կեանքի արեւշատութեան համար, խնդիրքս սեցէ՛ք, լսեցէ՛ք ու էլի ձեր ասածն արէք: Մանուկ Փիլօ եւ Գիրգոր իմ որդիքս էին, որոնք մեռել են երեք—չորս ամսական ժամանակները, ախար ես . . .

—Մենք չը գիտենք, խօ իմացար, որ մենք տոմարի համաձայն ենք պահանջում քեզանից այդ փողը եւ տէրութեան մատեանի մէջ սուտ չի կարող սպրդիլ:

—Չեմ ասում սուտ, մեղա, բայց կարող են սխալ-ւել, մեռածներին չը ջնջել, կամ մոռանալ ջնջելու....

—Դատարկ խօսքեր պետք չէ, փողերը, թէ չէ ես մարդ կուղարկիմ, հիմա բերել կը տամ եւ աճուրդով կը ծախւեմ քու տանդ եղածն ու չեղածլ:

—Ես փող չունիմ եւ երեք մարդուց էլ աւելի չունիմ, որ չորս անգամ աւել հարկ տամ, ինչպէս ուզում էք, արէ՛ք:

—Անհաւատի համարձակութեանը նայի՛ր, զարկ

այդ շանը. ձայնը կտրէ, ասաց գործակալը նշան տալով զաբթիէին, որն իսկոյն տեղացուց մտքակի հարւածները:

Բայց զուր, Վարդեւանը փող չունէր, վարկ էլ չէր մնացել, ինարք չը կար, որ կաշին ազատէր հարկահանների ծեռքից: Դիւղում ո'չ ոք էլ նրան փոխ տալու սիրտ չէր անում, քաղաքացիք բոլորն էլ իմացել էին, որ նրա կալւածները գրաւ էին դրւած Շէյխի մօտ: Հարկահանները պարտաւորւած ծախեցին Վարդեւանին լծկան անասունները, կովերը եւ փողերը, մի բան էլ աւել գանձեցին ու հեռացան: Անասուններից զրկւած, անսերմ, օրական ուտելու հացի կարօտ եւ կարեւոր կարասիքներից ու գործիններից բաժանւած մնաց ապուշի նման Վարդեւանը իւր տան մի անկիւնում: Ամօթից դռնից չէր կարողանում դուրս գալ մարդու աչքի երեւիլ:

Բարեսիրտ եւ ցաւակից տէրտէրն ու քէհան երես շուրու տւին Վարդեւանից, քանի որ նրանց իղձը չը կատարւեց, կալւածները չ'անցաւ Մեղրենց ծեռքը: Դուռ դրացի երես էին պահում, որ չը պարտաւորւէին Գարանին, կամ Վարդեւանին բան փոխ տալ: Պահանջատէրներն էլ հարկահաններից աւելի ազահարար մօտեցան եւ Վարդեւանի տանը մնացած կահ կարասիններով փակեցին իրենց հաշիւները:

Էլ ինար չը գտաւ Վարդեւանը արտերը ցանելու, էլ ոչ ոք սիրտ չարաւ նրան ծեռք բռնելու, ցանքսի ժամանակն հասաւ ու անցաւ եւ նա չը կարողացաւ մի բուռ ցորեն ցանել: Դեղեւոնից ու Մելքոնից խաբար չը կար, իրենք էլ համարեայ մուրացկանութիւնով էին ապրում: Ամենքը—գիւղացիք միա-

բերան ասում էին.—Շեյխը կու՛լ տւեց Վարդեւանի կալւածները:

Վարդեւան էլ յուզլած ու բորբոքւած կրկնում էր.—Աւելի լաւ է Շեյխն ուտէ, Շեյխը տիրապտէ իմ մլքերը, քան թէ անօրէն, անխիղճ ազգակիցս:

Վերջապէս անտանելի դարձաւ կեանքը Վարդեւանի ու Գարանի համար, նրանք մի գիշեր հաւաքեցին մի քանի կարեւոր իրեր ու ճանապարհ ընկան դէպի Ղարս: Վարդեւանը տարաւ իրեն հետ եւս իւր իիւսնութեան գործիքները, յուսալով երկուզ զաւակների հետ գարունն ու ամառը մի կերպ քսանը հինգ լիրա աշխատել, գալ ու կայքերն ազատել: Բայց պանդխտութեան մէջ վաստակածից, օրական ստացածից բան չէին կարողանում ետ գցել....:

Ասում են Շեյխը հետեւեալ տարին Վարդեւանի տունը յանձնել է Մանուկին, արտերի հետ եւ բերքերը կիսում: Վարդեւանը դեռ յոյս ունի մի կերպ քսանը հինգ լիրա վաստկել հողերը ազատել եւ նախկին խաղաղ եւ անկախ գործը ձեռք բերել.....:

ՎԵՐՋ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. „ԱԼՄԱՍՑ“ Բարձր Հայոց (Թ. բքահայերի) կեանքից գինն է 2 ր.
2. „ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՑ“ Հայ-կաթոլիկոսերի (Թ. բքահ.) կեանքից ,, 1 ր.
3. „ՔՈՌ-ԵՂԻԿ“ Շիրակեցիների թուրքա- հայերի կեանքից ,, 30 կ.
4. „ՇՈՒՇԱՆ“ Ողբերգութիւն թրքա- հայերի իրական կեանքից ,, 1 ր.
5. „ՍԱՐՐԱՁ“ Ողմերգութիւն թրքահա- յերի պատմական կեանքից ,, , 30 կ.
6. „ՇԽՆՈՅՑ“ Սազի գիւղացիների (Թ. բքա- հայերի) կեանքից ,, 30 կ

Դիմել Թիֆլիսի Կենդրոնական Գրա-
վաճառանոցը եւ Կովկասի այլ քա-
ղաքների հայ-Գրավաճառներին:
Գրավաճառները կարող են դիմել
նոյնպէս. Յէ Խաչևան և Ա., Յէ
գրոգրաֆիո Բր. Ավակովին, որոնց
կը լինի սովորական զիջումն:

$\mu \cdot \beta - 1$

$q\mu - 0$

